



Ծրագիրը համաֆինանսավորվում է  
Եվրոպական միության կողմից

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ  
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ  
ՄԻԱՍՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ  
ՄՈԴԵԼԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ

2 Ե Կ Ո Ւ Յ Ց



Երևան  
2017

<b>Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ու Թ Յ Ու Ն</b>	
<a href="#"><u>ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ</u></a> .....	3
<a href="#"><u>ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ</u></a> .....	4
<a href="#"><u>ՆԱԽԱԲԱՆ</u></a> .....	5 - 6
<a href="#"><u>ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ</u></a> .....	7 – 8
<b>Գլուխ 1. Հայաստանում քաղաքականության մշակման միասնական կառավարման մոդելի իրավական հիմքերի ուսումնասիրություն</b>	9 - 13
1.1. <a href="#"><u>Հայաստանի Հանրապետության Բաց Կառավարման Գործընկերություն նախաձեռնությունն ու ՀՀ ԲԿԳ 2 գործողությունների պլանով ստանձնած քաղաքականության մշակման միասնական կառավարման մոդելի ստեղծման հանձնառությունները</u></a> .....	9 - 10
1.2. <a href="#"><u>ՀՀ ԲԿԳ 2 գործողությունների պլանով ստանձնած հանձնառությամբ կառավարության որոշմամբ քաղաքականության և իրավական ակտերի մշակման միասնական կառավարման ինստիտուցիոնալ համակարգը նախարարություններում</u></a> .....	10 - 11
1.3. <a href="#"><u>ՀՀ ԲԿԳ 2 գործողությունների պլանով ստանձնած հանձնառությամբ կառավարության որոշմամբ ստեղծված իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական e-draft.am կայքը</u></a> .....	11 - 13
1.4. <a href="#"><u>Հայաստանում քաղաքականության և իրավական ակտերի մշակման միասնական կառավարման մոդելը ՀՀ ԱԺ-ի օրինաստեղծ գործընթացում</u></a> .....	13
<b>Գլուխ 2. Հայաստանում քաղաքականության և իրավական ակտերի մշակման միասնական կառավարման առկա մոդելի գործունեության ուսումնասիրություն</b>	13 - 21
2.1. <a href="#"><u>Նախարարին կից հասարակական խորհուրդների գործունեությունը 2016թ</u></a> .....	13 - 15
2.2. <a href="#"><u>Նախարարին կից հասարակական խորհուրդների գործունեությունը 2017թ</u></a> .....	15 - 17
2.3. <a href="#"><u>Նախարարին կից հասարակական խորհրդի գործունեության մասին նիստերի դիտորդության և ֆոկլուս խմբային քննարկման ընթացքում հավաքագրված տեղեկատվություն</u></a> .....	17 - 19
2.4. <a href="#"><u>Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական e-draft.am կայքը</u></a> ....	19 - 20
2.5. <a href="#"><u>Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի օրինաստեղծ գործընթացում ՔՀԿ-ների մասնակցության առկա վիճակը</u></a> .....	20 - 21
<b>Գլուխ 3. Հայաստանում քաղաքականության մշակման միասնական կառավարման առկա մոդելի գնահատման եզրակացություններն ու առաջարկները</b>	21 - 23
3.1. <a href="#"><u>Եզրակացություն նախարարին կից հասարակական խորհրդի վերաբերյալ</u></a> .....	21
3.2. <a href="#"><u>Եզրակացություն իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական e-draft.am կայքի վերաբերյալ</u></a> .....	21
3.3. <a href="#"><u>Եզրակացություն ՀՀ Ազգային ժողովի օրինաստեղծ գործընթացում խորհրդարանական լսումների, հանրային քննարկումների համակարգի վերաբերյալ</u></a> .....	21 - 22
3.4. <a href="#"><u>ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ</u></a> .....	22
3.4.1. <a href="#"><u>Առաջարկվում է ծրագրի շրջանակում աջակցել</u></a> .....	22
3.4.2. <a href="#"><u>Նախարարություններին առաջարկվում է՝</u></a> .....	22
3.4.3. <a href="#"><u>ՀՀ Ազգային ժողովին առաջարկվում է՝</u></a> .....	22
3.4.4. <a href="#"><u>Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին առաջարկվում է՝</u></a> .....	22 - 23
<b>Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ծ Ն Ե Ր</b>	
Հավելված 1. <a href="#"><u>ՀՀ նախարարին կից 18 հասարակական խորհրդի 2016 և 2017թթ. գործունեության վիճակագրական տվյալները</u></a> .....	24 - 30
Հավելված 2. <a href="#"><u>Նամակներ</u></a> .....	31 - 46

## ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ԱԺ	Ազգային ժողով
ԵՄ	Եվրոպական Միություն
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՔՀԿ	Քաղաքացիական հասարակության կազմակերպություն
ԲԿԳ	Բաց կառավարման գործընկերություն
ԳԾ	Գործողությունների ծրագիր

-

## Ն Ե Ր Ա Ծ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ներկայացվող ուսումնասիրությունն իրականացրել է «Արագ» ԲՀԿ-ն Եվրոպական Միության կողմից ֆինանսավորվող «Աջակցություն ՀՀ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կարողությունների հզորացմանը» ծրագրի շրջանակներում «ՀԿ Կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման ՀԿ-ի հետ համատեղ իրականացվող «Հայաստանում քաղաքականության մշակման միասնական կառավարման մոդել» ծրագրի շրջանակներում:

Ուսումնասիրության նպատակն էր մոնիթորինգի արդյունքում ստանալ կառավարության «Պետական քաղաքականությունների և օրենսդրական բարեփոխումների՝ բաց, թափանցիկ, մասնակցային և հաշվետու գործընթացի ապահովում» հանձնառության կատարման արդյունավետության գնահատականը, Հայաստանում քաղաքականության մշակման միասնական կառավարման նորարարական մոդելի կայացման տեսանկյունից, բացահայտել խոչընդոտները և ծրագրի շրջանակում աջակցել դրանց լուծմանը ի նպաստ մոդելի կայացման:

Ուսումնասիրության թիրախ են հանդիսացել ՀՀ նախարարներին կից հասարակական խորհուրդները, իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական e-draft.am կայքը և ՀՀ Ազգային Ժողովի հանրային լսումների և քննարկումների ինստիտուտը: Հայաստանում քաղաքականության մշակման միասնական կառավարման նոր մոդելի կայացման գնահատման հիմք են ընդունվել.

- նախարարներին կից հասարակական խորհուրդների՝ ձևավորման ընթացակարգի, ձևավորված խորհրդի կազմում ընդգրկված փորձառություն ունեցող ՀԿ-ների օրակարգի ձևավորման գործընթացում մասնակցության, խորհուրդների գործունեության և հաշվետվողականության,
- իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական e-draft.am կայքի՝ 2017 թ-ի նոյեմբերի դրությամբ բաժանորդների, այցելուների, հանրային առաջարկների, ամփոփաթերթերի առկայության, նախարարությունների կողմից տեղադրված իրավական ակտերի,
- ԱԺ լսումների և դրանցում ՔՀԿ-ների մասնակցության վերաբերյալ տեղեկատվությունը:

Մոնիթորինգն իրականացվել է համացանցում պաշտոնական կայքերից, համապատասխան մարմինների պաշտոնական գրությունների, ֆոկուս խմբային հանդիպման ընթացքում հավաքագրված տվյալների ուսումնասիրության միջոցով:

Ուսումնասիրության արդյունքների հիման վրա մշակված Հայաստանում քաղաքականության մշակման միասնական կառավարման մոդելի կայացմանն աջակցող առաջարկությունների փաթեթը ներկայացվել է մոդելի կառավարման պատասխանատու ՀՀ Արդարադատության նախարարությանը, ՀՀ Ազգային Ժողովին և ծրագրի գործընկեր («STRONG CSOs» ծրագրի ղեկավարությանը):

## Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Եվրոպական Միության կողմից ֆինանսավորվող «Աջակցություն ՀՀ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կարողությունների հզորացմանը» ծրագրի («STRONG CSOs» ծրագիր) փոքր դրամաշնորհային նախագծի շրջանակներում «ՀԿ Կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման ՀԿ-ի և «Արագ» ԲՀԿ-ի կողմից իրականացվող «Հայաստանում քաղաքականության մշակման միասնական կառավարման մոդել» ծրագրի շրջանակներում գնահատվել է կառավարության «Պետական քաղաքականությունների և օրենսդրական բարեփոխումների՝ բաց, թափանցիկ, մասնակցային և հաշվետու գործընթացի ապահովում» հանձնառության կատարումը Հայաստանում քաղաքականության մշակման միասնական կառավարման մոդելի գնահատման տեսանկյունից: Այս մոդելի ձևավորման գաղափարն ուղղակիորեն բխում է Բաց Կառավարման Գործընկերություն (այսուհետ նաև՝ ԲԿԳ) միջազգային նախաձեռնության սկզբունքներից, որին Հայաստանի Հանրապետությունը միացել է 2011-ի նոյեմբերին<sup>1</sup>: Բաց կառավարման գործընկերությունը<sup>2</sup> (Open Government Partnership) կամավոր միջազգային նախաձեռնություն է, որի նպատակն է քաղաքացիական հասարակության ակտիվ ներգրավմամբ նպաստել կառավարման համակարգի բարելավմանը, խթանել վերջինիս արդյունավետությունը՝ բարձրացնելով պետություն-քաղաքացի հարաբերությունների թափանցիկության, վստահելիության և հաշվետվողականության մակարդակը: ԲԿԳ հռչակագրում<sup>3</sup> ասվում է, որ այն նպատակ ունի բարձրացնել կառավարողների գործողությունների մասին հրապարակայնությունը, խթանել հասարակության մասնակցությունը հանրային կյանքի կառավարմանը, ունենալ առավել թափանցիկ և պատասխանատու իշխանություններ: ԲԿԳ-Հայաստանի երկրորդ գործողությունների պլանի 7-րդ կետով կառավարությունը ստանձնեց «Պետական քաղաքականությունների և օրենսդրական բարեփոխումների՝ բաց, թափանցիկ, մասնակցային և հաշվետու գործընթացի ապահովում», իսկ 8-րդ կետով՝ «Պետական կառավարման մարմինների օրինաստեղծ գործունեության մասին հանրության իրազեկում» հանձնառությունները: Այս հանձնառություններով ձևավորվելու էր Հայաստանում քաղաքականության մշակման միասնական մասնակցային կառավարման համակարգված մոդել:

2015թ-ի նոյեմբերի 26-ին կառավարության նիստում թիվ N 52 արձանագրային որոշմամբ հաստատվել է 2010 թվականի մարտի 25-Ի N 296-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու և «ՀՀ նախարարին կից հասարակական խորհրդի օրինակելի աշխատակարգին հավանություն տալու մասին» որոշումը: Որի համաձայն 2016թ-ի մայիսից կառավարությունը սկսել է հաստատել է նախարարությունների կանոնադրություններում համապատասխան փոփոխությունների մասին նախարարների հրամանները և սկսվել են ձևավորվել նախարարին կից հասարակական խորհուրդները: Որոնցում ՔՀԿ-ները ստացան քաղաքականությունների և իրավական ակտերի մշակման գործընթացի դեռ նախնական փուլում ներգրավվելու հնարավորություն:

2016թ 11 նոյմբերի. N 1134-Ն Կառավարության որոշմամբ հաստատվել է «ՀՀ կառավարության 2010թ.-ի մարտի 25-ի N296-ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» որոշումը և 2016թ դեկտեմբերից գործարկվել է իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական e-draft.am կայքը, սահմանվել է կայքում ներկայացված հանրային առաջարկներն ամփոփաթեթում ներառելու պարտադիր նախապայման (առաջարկներն ընդունելու, խմբագրելու կամ մերժման վերաբերյալ հստակ մեկնաբանությամբ): Ինչը խնդիր ունի նպաստել նաև հաշվետվողականության և հանրային վստահության բարձրացմանը:

2017թ նոյեմբերի դրությամբ ի կատարումն 2015թ-ի նոյեմբերի 26-ին կառավարության թիվ N 52 արձանագրային որոշման կատարման ՀՀ նախարարին կից հասարակական խորհուրդներ ձևավորվել և գործում են 18 նախարարություններից 13-ում: Մնացած 5 նախարարություններում դրանք դեռ չեն ձևավորվել տարբեր պատճառներով, որոնք են.

<sup>1</sup> ՀՀ Բաց Կառավարման Գործընկերություն պաշտոնական կայք <http://www.opengovpartnership.org/country/armenia>

<sup>2</sup> Բաց Կառավարման Գործընկերություն [www.opengovpartnership.org](http://www.opengovpartnership.org)

<sup>3</sup> Բաց Կառավարման Գործընկերություն [http://www.ogp.am/u\\_files/file/OGP%20Declaration%20of%20Principles\\_ARM.pdf](http://www.ogp.am/u_files/file/OGP%20Declaration%20of%20Principles_ARM.pdf)

1. ՀՀ Միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարարությունը, համաձայն բանավոր պատասխանի, նախարարության ձևավորման և գործառույթների հստակեցման գործընթացում գտնվելու պատճառով,
2. ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարությունը, համաձայն բանավոր պատասխանի՝ պայմանավորված նախարարի փոփոխությամբ գործընթացը ձգձգվել է,
3. ՀՀ Արտաքին գործերի նախարարությունը, համաձայն պաշտոնական գրության պայմանավորված 2017թ մայիսի 18-ի N499 որոշմամբ ուժը կորցրած ճանաչելու 2002թ. օգոստոսի 1-ի «Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» N 1245-Ն որոշման N1 հվելվածի 15.2-րդ կետի, որը սահմանափակում է որոշման կատարումը
4. ՀՀ Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությունը, համաձայն պաշտոնական գրության՝ դիմորդների թիվը չի բավարարում խորհրդի կազմի համար սահմանված մինիմալ սահմանը, ուստի գործընթացն առ այսօր ընթացքի մեջ է,
5. ՀՀ Ֆինանսների նախարարությունը, համաձայն պաշտոնական գրության՝ դիմորդների թիվը չի բավարարում խորհրդի կազմի համար սահմանված մինիմալ սահմանը, ուստի առ այսօր գործընթացն ընթացքի մեջ է:

Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական e-draft.am կայքի ուսումնասիրության արդյունքում բացահայտվել է հետևյալ պատկերը.

2017թ նոյեմբերի դրությամբ կայքի.

- 1) օգտատերերի թիվը՝ 8.624<sup>4</sup>
- 2) այցելուների թիվը՝ 31087
- 3) գրանցման ակտիվությունը նոյեմբեր ամսվա ընթացքում՝ 72
- 4) առավել ակտիվ նախարարությունների թիվը՝ 10
- 5) տեղադրված նախագծերի թիվը 567<sup>5</sup>
- 6) ակտիվ նախագծերի թիվը 41

ՀՀ Ազգային ժողովի օրինաստեղծ գործընթացում ՔՀԿ-ների մասնակցության իրավական հիմքերը սահմանված են ՀՀ ԱԺ-ի կանոնակարգ օրենքով: Համաձայն որի մշտական հանձնաժողովները կազմակերպում են հանրային լուսմներ և քննարկումներ: Մշտական հանձնաժողովի նիստերը հրապարակային են, այսինքն կարող են մասնակցել նաև քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ, կանխավ գրանցվելու միջոցով: Սակայն ԱԺ-ի պաշտոնական կայքում առկա չէ խորհրդարանական լուսմների և քննարկումների համար առանձնացված էջ, անգամ հանձնաժողովների բաժնում, ուր տեղադրվում է գտնել լուսմների մասին հայտարարությունները, օրակարգը, քննարկվող նյութերը և արձանագրությունները: Լուսմների մասին հայտարարությունը տեղադրվում է լուրերի բաժնում: ՔՀԿ-ների մասնակցության վերաբերյալ վիճակագրություն չի վարվում:

Մոնիթորինգի շրջանակում հոկտեմբեր, նոյեմբեր ամիսների ընթացքում նախարարին կից խորհուրդների նիստերի մասնակցության և **Հայաստանում քաղաքականության մշակման միասնական կառավարման մոդելի** արդյունավետության վերաբերյալ ֆոկուս խմբային քննարկման միջոցով բացահայտվել են նիստերի կազմակերպման և վարման ընթացակարգերի վերաբերյալ մի շարք խնդիրներ:

Հավաքագրված փաստերի լույսի ներքո վերլուծության միջոցով փորձ է արվել գնահատել Հայաստանում քաղաքականության և իրավական ակտերի մշակման միասնական կառավարման մոդելի առկա վիճակը, բացահայտել խնդիրներն ու համապատասխան առաջարկների փաթեթի առաջ մղման միջոցով ծրագրի ընթացքում աջակցել դրա զարգացմանը:

<sup>4</sup> e\_draft.am կայքի վիճակագրություն բաժին; <https://www.e-draft.am/statistics>

<sup>5</sup> e\_draft.am կայքի գլխավոր էջ, <https://www.e-draft.am/>

## ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հայաստանում քաղաքականության մշակման միասնական կառավարման մոդելի ներդրման կատարողականի մոնիթորինգն իրականացվել է պետական մարմինների և ՔՀԿ-ների ներգրավմամբ: Դա թույլ է տվել հետևել կառավարության որոշումների և քաղաքականության իրականացմանը, չափել դրանց արդյունավետությունն ու համապատասխանությունը: Արդյունքներն ամփոփելիս այն հիմք է տալիս կապ հաստատել համապատասխան հանրային պաշտոն զբաղեցնողների հետ քննարկելու համար արված բացահայտումները և նախանշել առկա խնդիրների լուծմանն ուղղված հնարավոր քայլերը:

Մոնիթորինգի շրջանակներում իրականացվել է իչպես միասնական կառավարման մոդելը կարգավորող իրավական ակտերի, պաշտոնական, այդ թվում իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական e-draft.am կայքերի և փաստաթղթերի ուսումնասիրություն, այնպես էլ նախարարին կից հասարակական խորհուրդների նիստերի և ֆոկուս խմբային քննարկման ընթացքում արձանագրված բացահայտ միջոցով:

### Փաստաթղթերի ուսումնասիրություն

Առցանց եղանակով պետական մարմինների կայքերից և պաշտոնական գրություններով հավաքագրվել և ուսումնասիրվել են Հայաստանում քաղաքականության մշակման միասնական կառավարման մոդելի իրավական ակտերը՝ ԲԿԳ-Հայաստանի երկրորդ գործողությունների պլանը հաստատող թիվ 32-1, կառավարության թիվ N 52, 2015 թվականի հունվարի 22-ի «Հայեցակարգերի, ռազմավարությունների, ծրագրերի կազմման մեթոդական ուղեցույցին հավանություն տալու մասին» N2, 2016 թվականի N 1134 -Ն որոշումները, ՀՀ Ազգային Ժողովի կանոնակարգ օրենքը, նախարարին կից հասարակական խորհրդի գործունեության տեղեկատվական ռեսուրսները, իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական e-draft.am կայքի վիճակագրական տվյալները:

### Մոնիթորինգ

Ուսումնասիրությունն իրականացվել է համացանցում 18 նախարարությունների կայքերից և համապատասխան մարմիններից հավաքագրվելով պաշտոնական տեղեկատվություն.

1. Նախարարներին կից հասարակական խորհուրդների.
  - a) ձևավորման և ընտրությունների ժամանակացույցի,
  - b) ձևավորման գործընթացի և գործունեության,
  - c) խորհրդի կազմում ընդգրկված փորձառություն ունեցող ՀԿ-ների թվի,
  - d) խորհրդի օրակարգի ձևավորման գործընթացում ՔՀԿ-ների մասնակցության,
  - e) խորհուրդների հաշվետվողականության վերաբերյալ:
2. «Պետական կառավարման մարմինների օրինաստեղծ գործունեությանը հանրության մասնակցության»՝ իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական e-draft.am կայքից.
  - a) օգտատերերի,
  - b) այցելուների,
  - c) գրանցման ակտիվությունն ամսվա ընթացքում,
  - d) տեղադրված նախագծեր,
  - e) ակտիվ նախագծերի,
  - f) առավել ակտիվ նախարարությունների:

3. ՀՀ Ազգային Ժողովի լսումների և դրանց մասնակցած ՔՀԿ-ների թվի վերաբերյալ 2017թ-ի նույնների դրությամբ:

Պաշտոնական կայքերում տեղեկատվության բացակայության դեպքում գրություններ են հղվել համապատասխան պետական մարմիններին, իրականացվել է հեռախոսազանգեր, լրատվության և հանրային կապերի պատասխանատու պաշտոնյաների հետ հարցազրույցներ է կատարվել և դրանց համաձայն համալրվել է անհրաժեշտ տեղեկատվությունը:

Մոնիթորինգի գործընթացի և հավաքագրվող տվյալների թիրախների ընտրությունը համաձայնեցվել է Հայաստանում քաղաքականության մշակման միասնական կառավարման մոդելի ներդրման գործընթացը համակարգող ՀՀ Արդարադատության նախարարության հետ:

Իրականացվել է նախարարին կից հասարակական խորհուրդների նիստերի **դիտորդության**, որը պաշտոնապես համաձայնեցվել է բոլոր 13 նախարարությունների հետ: Դիտորդության ընթացքում հարցազրույցներ ենք ունեցել՝ խորհրդի գործունեությունը համակարգող քարտուղարների, հանրային կապերի բաժնի պատասխանատուների և խորհրդի անդամների հետ, կատարել արձանագրություններ նիստերի կազմակերպման և վարման ընթացակարգերի վերաբերյալ:

Իրականացվել է ֆոկուս խմբային քննարկում՝ **Հայաստանում քաղաքականության մշակման միասնական կառավարման մոդելի** արդյունավետության թեմայով, որին մասնակցել են՝ նախարարին կից հասարակական խորհրդի, e-draft.am կայքի օգտատեր և ՀՀ ԱԺ-ի հետ համագործակցության հուշագրով գործող «Հանրային ցանցի» անդամ 30 ՔՀԿ-ներ:

Հավաքագրված հավաստի տեղեկատվության հիման վրա իրականացվել է վերլուծություն և մշակվել առաջարկությունների փաթեթ Հայաստանում քաղաքականության մշակման միասնական կառավարման մոդելի կայացման ու զարգացման ուղղությամբ, որը ներկայացվել է շահագրգիռ կողմերի հաստատմանը:



## **Գլուխ 1. Հայաստանում քաղաքականության մշակման միասնական կառավարման մոդելի իրավական հիմքերի ուսումնասիրություն**

Այս գլխում ներկայացված են ուսումնասիրության թիրախի հանդիսացող Հայաստանում քաղաքականության մշակման միասնական կառավարման մոդելի իրավական հիմք հանդիսացող օրենսդրությունը. Հայաստանի Հանրապետության Բաց Կառավարման Գործընկերություն (այսուհետ՝ ԲԿԳ) նախաձեռնությունը, ԲԿԳ 2 գործողությունների պլանի 7-րդ և 8-րդ կետերի հանձնառությունները և դրանց կատարումն ապահովող որոշումները, պետական մարմինների գործառնությունները, քաղաքացիական հասարակության իրավունքներն ու պարտավորությունները:

### **1.1. Հայաստանի Հանրապետության Բաց Կառավարման Գործընկերություն նախաձեռնությունն ու ՀՀ ԲԿԳ 2 գործողությունների պլանով ստանձնած քաղաքականության մշակման միասնական կառավարման մոդելի ստեղծման հանձնառությունը**

ՀՀ-ն ԲԿԳ միջազգային նախաձեռնությունը միացել է 2011-ի նոյեմբերին<sup>6</sup>: Բաց կառավարման գործընկերությունը<sup>7</sup> (Open Government Partnership) կամավոր միջազգային նախաձեռնություն է, որի նպատակն է քաղաքացիական հասարակության ակտիվ ներգրավմամբ նպաստել կառավարման համակարգի բարելավմանը, խթանել վերջինիս արդյունավետությունը՝ բարձրացնելով պետություն-քաղաքացի հարաբերությունների թափանցիկության, վստահելիության և հաշվետվողականության մակարդակը: ԲԿԳ հոչակագրում<sup>8</sup> ասվում է, որ այն նպատակ ունի բարձրացնել կառավարողների գործողությունների մասին հրապարակայնությունը, խթանել հասարակության մասնակցությունը հանրային կյանքի կառավարմանը, ունենալ առավել թափանցիկ և պատասխանատու իշխանություններ:

Նախաձեռնության շրջանակներում ԲԿԳ անդամ երկրների կառավարությունները պարտավորվում են միջգերատեսչական խորհրդակցությունների և հանրային քննարկումների արդյունքում մշակել երկամյա Գործողությունների ծրագրեր (*այսուհետ՝ ԳԾ*), որով կսահմանվեն կառավարման ոլորտի բարեփոխմանն ուղղված իրատեսական խնդիրներն ու ժամկետները:

Հայաստանի Գործողությունների առաջին ծրագիրը<sup>9</sup> 2012թ.-ի ապրիլի 5-ին հաստատվեց «Բաց կառավարման գործընկերություն նախաձեռնության շրջանակներում ՀՀ գործողությունների ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշմամբ: Ծրագիրը պաշտոնապես ներկայացվեց միջազգային հանրությանը 2012թ.-ի ապրիլի 17-18-ին Բրազիլիայում կայացած ԲԿԳ տարեկան համաժողովի ժամանակ<sup>10</sup>: Այն ավարտված համարվեց 2014թ.-ի դեկտեմբերին:

2013 թվականի օգոստոսից Կառավարությունը սկսեց ԲԿԳ-Հայաստանի հաջորդ՝ 2014-2016թթ.-ի Գործողությունների ծրագրի մշակման գործընթացը: Ի տարբերություն ԲԿԳ 1-ի, ԲԿԳ 2 գործողությունների ծրագրի նախագծերը Կառավարության և ՔՀԿ ներկայացուցիչների հետ քննարկման մի շարք փուլեր անցան, որից հետո այն հաստատվեց 2014թ.-ի հուլիսի 31-ին, ՀՀ կառավարության նիստում<sup>11</sup> ««Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության շրջանակներում Հայաստանի Հանրապետության երկրորդ գործողությունների ծրագրին հավանություն տալու մասին» թիվ 32-1 արձանագրային որոշմամբ<sup>12</sup>, որն իրականացման փուլ մտավ 2014թ.-ի սեպտեմբերից:

ԲԿԳ-Հայաստանի երկրորդ գործողությունների պլանի 7-րդ կետով կառավարությունը ստանձնեց «Պետական քաղաքականությունների և օրենսդրական բարեփոխումների՝ բաց, թափանցիկ, մասնակցային և հաշվետու գործընթացի ապահովում», իսկ 8-րդ կետով՝ «Պետական կառավարման մարմինների օրինաստեղծ գործունեության մասին հանրության իրազեկում» հանձնառությունները: Այս պարտավորությունների իրականացումը ենթադրում էր ՀՀ-ում

<sup>6</sup> <http://www.opengovpartnership.org/country/armenia>

<sup>7</sup> [www.opengovpartnership.org](http://www.opengovpartnership.org)

<sup>8</sup> [http://www.ogp.am/u\\_files/file/OGP%20Declaration%20of%20Principles\\_ARM.pdf](http://www.ogp.am/u_files/file/OGP%20Declaration%20of%20Principles_ARM.pdf)

<sup>9</sup> [http://www.ogp.am/u\\_files/file/OGP\\_ACTION%20PLAN\\_Arm.pdf](http://www.ogp.am/u_files/file/OGP_ACTION%20PLAN_Arm.pdf)

<sup>10</sup> ՀՀ Բաց կառավարման գործընկերություն, պաշտոնական կայք <http://www.ogp.am/hy/news/item/2012/04/19/Brazil/>

<sup>11</sup> ՀՀ Բաց կառավարման գործընկերություն, պաշտոնական կայք <https://www.e-gov.am/sessions/archive/2014/07/31/>

<sup>12</sup> ՀՀ Բաց կառավարման գործընկերություն, պաշտոնական կայք [http://www.ogp.am/u\\_files/file/2ndvoroshum.pdf](http://www.ogp.am/u_files/file/2ndvoroshum.pdf)

**քաղաքականության մշակման միասնական կառավարման մոդելի** իրավական հիմքերի և ինստիտուցիոնալ համակարգի ձևավորում: Պարտավորությունները ԳԾ-ում ընդգրկվեցին «Արագ» ՀԿ-ի առաջարկով, ուստի ՀՀ արդարադատության նախարարության հետ վերջինս ճանաչվեց պարտավորության իրականացման պատասխանատու կողմ: Պարտավորության իրականացման ընթացքում ապահովվել է ամբողջական տեղեկատվություն, ՔՀԿ-ների ակտիվ մասնակցություն նախագծերի մշակման ընթացքում. ՀՀ արդարադատության նախարարությունն իր պաշտոնական կայքում, ֆեյսբուքյան էջում հրապարակել է մշակված նախագծի շուրջ քննարկումների մասին տեղեկատվություն, նախագիծը դրվել է [www.ogp.am](http://www.ogp.am) կայքում, էլ. փոստով և տպագիր տարբերակով ուղարկվել է պետական մարմիններին ու շահագրգիռ ՔՀԿ-ներին՝ առաջարկություններ և լրացումներ ստանալու նպատակով: Մտացված առաջարկները ներառվել են ամփոփաթեթում և տրամադրվել շահագրգիռ կողմերին:

## **1.2. ՀՀ ԲԿԳ 2 գործողությունների պլանով ստանձնած հանձնառությամբ քաղաքականության և իրավական ակտերի մշակման միասնական կառավարման ինստիտուցիոնալ համակարգը նախարարություններում**

Ստորև ներկայացված են Հայաստանի կառավարությունում քաղաքականությունների և իրավական ակտերի մշակման միասնական կառավարման գործընթացն ապահովող ինստիտուցիոնալ մարմինները՝ նախարարին կից հասարակական խորհուրդների գործառույթները, դրանց շրջանակում քաղաքացիական հասարակության իրավունքներն ու պարտավորությունները կարգավորող որոշումը:

2015թ-ի նոյեմբերի 26-ին կառավարության նիստում թիվ N 52 արձանագրային որոշմամբ հաստատվել է 2010 թվականի մարտի 25-Ի N 296-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու և «ՀՀ նախարարին կից հասարակական խորհրդի օրինակելի աշխատակարգին հավանություն տալու մասին» որոշումը: Որի համաձայն 2016թ-ի մայիսից կառավարությունը սկսել է հաստատել նախարարությունների կանոնադրություններում համապատասխան փոփոխությունների մասին նախարարների հրամանները:

Հիշյալ որոշմամբ նախարարին կից հասարակական խորհրդի աշխատակարգի համաձայն խորհրդի **նպատակն է՝** նախարարության առջև դրված խնդիրների և գործառույթների իրականացման ընթացքում ապահովել քաղաքացիական հասարակության մասնակցությունը, ինչպես նաև աջակցել նախարարության առջև դրված խնդիրների ու գործառույթների առավել արդյունավետ իրականացմանը՝ ներկայացնելով առաջարկություններ և դիտողություններ նախարարության կողմից վարվող ընդհանուր քաղաքականության առավել արդյունավետ իրականացման վերաբերյալ:

ՀՀ նախարարին կից հասարակական խորհուրդը խորհրդատվական մարմին է: Խորհուրդը բաց քվեարկությամբ, ձայների պարզ մեծամասնությամբ կարող է ընդունել խորհրդատվական բնույթի որոշումներ: Խորհուրդն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով, որոնք գումարվում են առնվազն երեք ամիսը մեկ անգամ, անհրաժեշտության դեպքում կարող են հրավիրվել նաև արտահերթ նիստեր: Խորհրդի նիստերը հրավիրվում են խորհրդի նախագահի, այսինքն՝ նախարարի և խորհրդի անդամների 1/3-ի նախաձեռնությամբ:

Խորհրդի օրակարգը ձևավորվում է խորհրդի նախագահի և անդամների օրակարգի հարցերի առաջադրման հիման վրա: Խորհրդի նիստերի օրակարգն ու քննարկվող նյութերը խորհրդի անդամներին տրամադրվում են էլեկտրոնային փոստով նիստի օրվանից առնվազն 5 օր առաջ: նիստից հետո հնգօրյա ժամկետում նիստի քարտուղարը (նախարարի օգնականը) նիստի արձանագրությունն էլ. փոստով ուղարկում է խորհրդի անդամների հաստատմանը, որից հետո եռօրյա ժամկետում նիստերի օրակարգը և արձանագրությունները տեղադրվում են նախարարության համապատասխան կայքում:

ՀՀ նախարարին կից հասարակական խորհուրդի կազմում կարող են ընդգրկվել հայաստանյան հասարակական կազմակերպություններ, զանգվածային լրատվության միջոցներ, ազգային փոքրամասնություններ ներկայացնող կազմակերպություններ, ինչպես նաև հեղինակավոր և ճանաչված անձիք, անհատ փորձագետներ:

Երկու տարին մեկ անգամ Խորհրդի անդամների մեկ երրորդը վիճակահանության մեխանիզմով ենթարկվում է ռոտացիայի: Ռոտացիայի արդյունքում Խորհրդի կազմից դուրս եկած անդամը կարող է Խորհրդում ընդգրկվելու նպատակով դիմում ներկայացնել Խորհրդի կազմից դուրս գալուց միայն երկու տարի անց:

Համաձայն Կառավարության 2015թ-ի նոյեմբերի 26-ի թիվ N 52 արձանագրային որոշման նախարարին կից հասարակական խորհրդի օրինակելի աշխատակարգի՝ նախարարության պաշտոնական կայքում զետեղվում են ՀՀ նախարարի հրամանով հաստատված դիմումի ձևը և պահանջվող փաստաթղթերի ցանկը, որոնք լրացվում են հասարակական խորհրդի կազմում ընդգրկվել ցանկացող հասարակական կազմակերպությունների և անհատների կողմից և պահանջվող կից փաստաթղթերի հետ էլեկտրոնային փոստով ներկայացվում նախարարության կողմից նշված էլեկտրոնային փոստի հասցեով:

Ներկայացված դիմումները քննարկվում են նախարարությունում և հաշվի առնելով հասարակական կազմակերպությունների և անհատների գործունեության բնույթը, հիմնական ուղղությունները, ոլորտում գործակցության զարգացման մասնագիտական փորձառությունը, ոլորտին առնչվող ծրագրերի, հետազոտությունների, հրապարակումների առկայությունը, նախարարության կողմից ձևավորված աշխատանքային խմբերի և կազմակերպած գիտաժողովների, կլոր սեղանների մասնակցությունը, նրանք ընդգրկվել են նախարարին կից խորհրդի կազմում:

Խորհուրդը տարին մեկ պարբերականությամբ պետք է ներկայացնի խորհրդի գործունեության հաշվետվություն:

### **1.3. ՀՀ ԲԿԳ 2 գործողությունների պլանով ստանձնած հանձնառությամբ ստեղծված իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական e-draft.am կայքը**


Այստեղ ներկայացված է ՀՀ ԲԿԳ 2 գործողությունների պլանով ստանձնած՝ «Պետական կառավարման մարմինների օրինաստեղծ գործունեության մասին հանրության իրազեկում» հանձնառությունը, դրա կատարումն ապահովող որոշումն ու դրա կատարման համար e-draft.am կայքը:

«Պետական կառավարման մարմինների օրինաստեղծ գործունեության մասին հանրության իրազեկում» հանձնառության նպատակն է՝ հանրությանը հնարավորություն տալ ծանոթանալ ընդունվող նախագծերին մինչև դրանց ընդունումը, ներկայացնել առաջարկություններ պատասխանատու գերատեսչություններին, ինչպես նաև ներդրում ունենալ դրանց լրամշակման գործում: Այդ նպատակով իրականացվել է պետական կառավարման մարմինների կողմից մշակվող նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հրապարակման ընդհանուր առցանց հարթակի ստեղծում՝ քաղաքացիական հասարակությանը հնարավորություն ընձեռելով ներկայացնել առաջարկություններ նախագծերի վերաբերյալ, ինչպես նաև ամփոփաթերթի միջոցով տեղեկանալ դրանց կարգավիճակի վերաբերյալ, հստակ պաշտոնական մեկնաբանությամբ: Այս հանձնառության կատարման նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության 2012թ.-ի ապրիլի 5-ի «Իրավական ակտերի նախագծերի մշակման մեթոդական ցուցումներին հավանություն տալու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թ.-ի հոկտեմբերի 28-ի N42 արձանագրային որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N13 արձանագրային որոշմամբ կարգավորվել են իրավական ակտերի մշակման կանոնները: Բացի այդ, իրավական ակտերի հայեցակարգերի, ռազմավարությունների, ծրագրերի մշակման կանոնները ամրագրվել են Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի «Հայեցակարգերի, ռազմավարությունների, ծրագրերի կազմման մեթոդական ուղեցույցին հավանություն տալու մասին» N2 արձանագրային որոշմամբ: Միաժամանակ, ՀՀ արդարադատության նախարարության կողմից, միջազգային փորձագետների ներգրավմամբ, իրականացվել է իրավական ակտերի մշակման և հանրային իրազեկման հետ կապված հարցերի կանոնակարգման աշխատանքներ:

2015թ.-ի օգոստոսին Նախարարությունից ստացված պատասխան գրությունից տեղեկանում ենք, որ մշակվել է «ՀՀ կառավարության 2010թ.-ի մարտի 25-ի N296-ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» Կառավարության որոշման նախագիծը և 2015թ.-ի օգոստոսին ուղարկվել է շահագրգիռ մարմիններին՝ առաջարկություններ և դիտողություններ ստանալու նպատակով: 2016 թվականի սեպտեմբերի 2 N 1134 -Ն «ՀՀ կառավարության 2010թ.-ի մարտի 25-ի N296-ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» որոշումը հաստատվել է նոյեմբերի 11-ին ՀՀ Վարչապետ Կարեն Կարապետյանի կողմից:<sup>14</sup> Համաձայն որի սահմանված է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից վարվող իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքի ստեղծման, վարման և դրանից օգտվելու կարգերը: Մասնավորապես իրավական ակտերի միասնական կայքում հանրային քննարկումներ իրականացնելու նպատակով հանրային քննարկումների հրավերը հրապարակելու հետ մեկտեղ նախագիծ մշակող մարմինը միասնական կայքում հրապարակում է նորմատիվ իրավական ակտի նախագիծը, իրավական ակտի ընդունման հիմնավորումը, ամփոփաթերթը, ինչպես նաև նախագիծ մշակող մարմնի հայեցողությամբ այլ նյութեր և իր կայքում տեղադրում է միասնական կայքի համապատասխան հղումը կամ ապահովում է կայքի ավտոմատացված միացումը միասնական կայքին: Պետական կառավարման մարմինների կողմից մշակվող նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հրապարակման ընդհանուր առցանց e-draft.am միասնական պաշտոնական կայքը գործարկվել է 2016թ. դեկտեմբերից և շահագործվում է 2017թ.-ի ընթացքում: Որոշման կատարումը ենթադրում է հանրային քննարկման ընթացքում ներկայացված առաջարկների ներառում ամփոփաթերթում պաշտոնական մեկնաբանությամբ՝ ընդունվել է, չի ընդունվել ինչ հիմնավորմամբ, խմբագրվել է ինչպես: Կայքն ունի պարզ կառուցվածք, գրանցվելու և բաժանորդագրվելու ռեժիմներ՝ ինչպես կազմակերպությունների, այնպես էլ քնակիչների համար, կայքից օգտվելու ուղղեցույց տեսահոլովակ: Կայքում բոլոր 18 նախարարություններն ու գերատեսչությունները տեղադրում են իրավական ակտերի նախագծերը, առկա է բաժանորդագրվելու և հետաքրքրող ոլորտների վերաբերյալ ավտոմատ ռեժիմով նոր նախագծերի մասին տեղեկատվություն ստանալու հնարավորություն<sup>15</sup>, (ինչպես նախագծի համառոտ, այնպես էլ ամբողջական բովանդակությամբ), կարող է քվեարկել նախագծի օգտին, կամ դեմ, ներկայացնել առաջարկներ և տեսակետներ, հարցեր ուղղել նախագծի հեղինակին և ստանալ պարզաբանումներ: Ներկայացված առաջարկներն ավտոմատ ներառվում են ամփոփաթերթում (եթե ունեն մասնագիտական, այլ ոչ թե հռետորական կամ զազրախոսությունների բովանդակություն), որը ևս հասանելի է կայքում:

Կայքն ունի նաև օգտատերերի՝ նախարարությունների, բաժանորդների և այցելուների թվի հաշվառման ավտոմատ հաշվառման ռեժիմ<sup>16</sup> (տես՝ օրինակ գրաֆիկ 1,2):

Գրաֆիկ 1



<sup>13</sup> ՀՀ Արդարադատության նախարարություն <http://www.givemeinfo.am/hy/case/1728/>  
<sup>14</sup> <https://www.e-gov.am/gov-decrees/calendar/2016/09/page/12/>  
<sup>15</sup> e\_draft.am կայքի գլխավոր էջ, <https://www.e-draft.am/>  
<sup>16</sup> e\_draft.am կայքի վիճակագրություն բաժին; <https://www.e-draft.am/statistics>



**1.4. Հայաստանում քաղաքականության և իրավական ակտերի մշակման միասնական կառավարման մոդելը ՀՀ ԱԺ-ի օրինաստեղծ գործընթացում**

Այս բաժնում ներկայացված է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի օրինաստեղծ գործընթացում ՔՀԿ-ների մասնակցության իրավական հիմքերը և ընթացակարգերը:

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի օրինաստեղծ գործընթացում ՔՀԿ-ների մասնակցության իրավական հիմքերը սահմանված են ՀՀ ԱԺ-ի կանոնակարգ օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ և 14-րդ հոդվածի 4-րդ կետերով: Համաձայն 12-րդ հոդվածի 5-րդ կետի «մշտական հանձնաժողովը կարող է հրավիրել խորհրդարանական լուսմներ»: Համաձայն 14-րդ հոդվածի 4-րդ կետի՝ «Մշտական հանձնաժողովի նիստերը հրապարակային են, այսինքն կարող են մասնակցել նաև քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ կանխավ գրանցվելու միջոցով: Մշտական հանձնաժողովի փակ նիստն անցկացվում է Կանոնակարգի 88-րդ հոդվածի 6-րդ, 93-րդ հոդվածի 2-րդ և 117-րդ հոդվածի 6-րդ մասերով սահմանված դեպքերում»:

**Գլուխ 2. Հայաստանում քաղաքականության և իրավական ակտերի մշակման միասնական կառավարման առկա մոդելի գործունեության մոնիթորինգի արդյունքները**

Այս բաժնում ներկայացված է 2016թ-ից ՀՀ-ում գործող նախարարին կից հասարակական խորհրդի և իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական e-draft.am կայքի գործունեությունը, Հայաստանում քաղաքականության և իրավական ակտերի մշակման միասնական մասնակցային կառավարման նոր մոդելի կայացման տեսանկյունից:

Իրականացված մոնիթորինգի ընթացքում հավաքագրված հավաստի տվյալների վերլուծության արդյունքում ցանկանում ենք ներկայացնել թե որքանով է նոր մոդելը երաշխավորում քաղաքականության մշակման կառավարման գործընթացի՝ թափանցիկությունը հանրային մասնակցայնությունը, հաշվետվողականությունը, բացառում կախվածությունը պետական պաշտոնյաների քաղաքական կամքից, ապահովում որոշումների վրա ազդեցության հնարավորությունը և նպաստում հանրային վստահության բարձրացմանը:

Ամփոփելով մոնիթորինգի արդյունքները ակնկալում ենք օգնել քաղաքացիական հասարակությանը տեսնել մոդելի հնարավորությունները, խնդիրները, զարգացման ուղիները և կողմնորոշվել գործընթացին ներգրավվելու հարթակների ընտրության հարցում:

**2.1. Նախարարին կից հասարակական խորհուրդների գործունեությունը 2016թ**

Մտորն ներկայացված է 2016թ-ի նախարարին կից հասարակական խորհուրդների ձևավորման, գործունեության և տեղեկատվական ռեսուրսների վերաբերյալ «Արագ» ԲՀԿ-ի իրականացրած մոնիթորինգի արդյունքները:


Ուսումնասիրության արդյունքում բացահայտվել է, որ 2016թ. հոկտեմբերի 31-ի դրությամբ 13 նախարարություններում արդեն ձևավորված են նախարարին կից հասարակական խորհուրդները, համաձայն սահմանված ժամանակացույցի և ընթացակարգերի: Յոթ

նախարարություններում (Միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների, Արտակարգ իրավիճակների, Արտաքին գործերի, Կրթության և գիտության, Բնապահպանության, Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների, Ֆինանսների) նախարարին առընթեր հասարակական խորհուրդները ձևավորված չեն:

Ձևավորված խորհուրդներից ոչ բոլորն են պահպանել աշխատակարգով սահմանված նիստեր հրավիրելու ժամանակացույցը (տես՝ գրաֆիկ 3)

**2016թ. Նախարարին կից հասարակական խորհրդի գործունեությունը**

**Գրաֆիկ 3**



Ուսումնասիրության ընթացքում հանդիպել ենք խնդիրների՝ խորհուրդների նիստերի մասին նախարարությունների պաշտոնական կայքերում տեղեկատվություն հավաքագրելու հարցում: Անհրաժեշտ տեղեկատվություն դժվար է եղել հայթայթել՝ ՀՀ միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների, ՀՀ պաշտպանության, ՀՀ սպորտի և երիտասարդության, ՀՀ սփյուռքի, ՀՀ տարածքային կառավարման, ՀՀ մշակույթի նախարարությունների կայքերում:

Բացահայտած խնդիրների առնչությամբ համապատասխան նախարարություններին հղվել է պաշտոնական հարցումներ՝ խորհուրդների բացակայության և պաշտոնական կայքերում խորհուրդների կայացրած նիստերի մասին անբավարար տեղեկատվության հարցերի պարզաբանման համար:

Ի պատասխան հարցումների պաշտոնապես տեղեկացել ենք, որ.

1. ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության խորհրդի բացակայության պատճառը պայմանավորված է ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության կազմից դուրս գալով և որպես նոր նախարարություն ձևավորման գործընթացում լինելով:
2. ՀՀ Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության խորհրդի բացակայության համար հիմք է հանդիսացել դիմորդ կազմակերպությունների անբավարար թիվը: Հայտարարությունը նախարարության կայքում տեղադրվել է մայիսին, այն նորից բաց է, դեկտեմբերի 2-ի վերջնաժամկետով:
3. ՀՀ արտաքին գործերի նախարարությունը խնդիրը մեկնաբանել է գերզբաղվածությամբ և հավաստել, որ նախապատրաստում են գործընթացը սկսվել:
4. ՀՀ ֆինանսների նախարարության հավաստմամբ խորհուրդների ձևավորման գործընթացն ընթացքի մեջ է:
5. ՀՀ միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարարությունը խախտելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ և 9-րդ հոդվածներում ամրագրված՝ գրավոր հարցումներին

պատասխանելու պարտավորությունը: Մոնիթորինգի ընթացքում արդեն երկրորդ անգամ նախարարությունը չի պատասխանում կազմակերպության կողմից ստացված պաշտոնական հարցմանը: Ավելին նախարարության պաշտոնական կայքում չի եղել որևէ տեղեկատվություն նախարարության կառուցվածքի, ստորաբաժանումների և պաշտոնյաների կոնտակտային տվյալների մասին:

Ինչ վերաբերվում է նախարարությունների պաշտոնական կայքերում խորհուրդների գործունեության, այսինքն իրականացրած նիստերի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվության անբավարար լինելու մասին հարցումներին՝ ստացվել են հետևյալ պաշտոնական պատասխանները.

1. ՀՀ պաշտպանության նախարարությունը մեկնաբանել է, որ նիստերի օրակարգը և մասնավորապես արձանագրությունները կայքում չկան, տեղեկատվության գաղտնիության պատճառով:
2. ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների (նախկին Էկոնոմիկայի) նախարարությունը մեկնաբանել է, որ նիստերի մասին տեղեկատվությունը բացակայում է, քանի որ նախարարության վերակառուցմամբ պայմանավորված նիստեր դեռ չեն հրավիրվել:
3. ՀՀ սփյուռքի նախարարությունը մեկնաբանել է, որ նախարարության կայքը վերակառուցման մեջ է, ուստի այն առայժմ չի թարմացվում:
4. ՀՀ սպորտի և երիտասարդության, ՀՀ Տարածքային կառավարման, ՀՀ Մշակույթի նախարարություններն ունեին բոլոր անհրաժեշտ տեղեկատվությունն իրենց կայքերում, սակայն դրանք հասանելի են դարձել բացառապես համապատասխան նախարարությունների իրավաբանական և հասարակայնության հետ կապերի բաժինների պետերի ուղղորդմամբ:

Տեղեկատվական ռեսուրսների բազայի խնդիրը պայմանավորված է նախարարությունների պաշտոնական կայքերի զանազան կառուցվածքներով, ինչն օգտատերերի համար խնդիրներ է առաջացնում կայքում եղած տեղեկատվության մատչելիության տեսանկյունից:

***Այս խնդրի հետ մենք չէինք բախվի, եթե իրականացված լիներ ԲԿԳ ԳԾ 1-ի շրջանակում ստանձնած՝ միասնական ձևաչափով կառավարության պաշտոնական կայքերի ստեղծման կառավարության հանձնառությունը:***

Այսպիսով 2016թ-ի մոնիթորինգի արդյունքում բացահայտվել է, որ նախարարին կից ձևավորված 11 հասարակական խորհուրդներից առավել արդյունավետ գործել են՝ 7 խորհուրդները, իսկ մնացած 4-ից ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին կից խորհուրդն իրականացրել է ընդամենը 1 նիստ, մյուսներն ընդհանրապես չեն գործել (տես գծապատկեր 1)

## **2.2. Նախարարին կից հասարակական խորհուրդների գործունեությունը 2017թ**

Ստորև ներկայացվում է 2017թ. նոյեմբերի 30-ի դրությամբ նախարարին կից հասարակական խորհրդի գործունեության առկա վիճակը: Ուսումնասիրությունն իրականացվել է նախարարին կից հասարակական խորհուրդների վերաբերյալ հետևյալ պաշտոնական տեղեկատվության հիմքերով.

- a) ձևավորման և ընտրությունների ժամանակացույցի,
- b) ձևավորման գործընթացի և գործունեության,
- c) խորհրդի կազմում ընդգրկված փորձառություն ունեցող ՔՀԿ-ների թվի,
- d) խորհրդի օրակարգի ձևավորման գործընթացում ՔՀԿ-ների մասնակցության,
- e) խորհուրդների հաշվետվողականության:

Ուսումնասիրության արդյունքում պարզ դարձավ, որ 2017թ նոյեմբերի դրությամբ ի կատարումն 2015թ-ի նոյեմբերի 26-ին կառավարության թիվ N 52 արձանագրային որոշման, սկսած 2016թ-ից ՀՀ նախարարին կից հասարակական խորհուրդներ ձևավորվել և գործում են 18 նախարարություններից 13-ում: 2017թ-ի ընթացքում նոր խորհուրդների ձևավորման հարցում առաջընթաց չի արձանագրվել և ի պատասխան խնդրի բացահայտման համար հղված




պաշտոնական հարցման տեղեկացել ենք, որ 5 նախարարություններում դրանք չեն ձևավորվել տարբեր պատճառներով, որոնք են.

1. ՀՀ միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարարությունը, համաձայն բանավոր պատասխանի պայմանավորված նախարարության ձևավորման և գործառույթների հստակեցման գործընթացում գտնվելով,
2. ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը, համաձայն բանավոր պատասխանի՝ պայմանավորված նախարարի փոփոխությամբ,
3. ՀՀ արտաքին գործերի նախարարությունը, համաձայն պաշտոնական գրության դա պայմանավորված է 2017թ մայիսի 18-ի N499 որոշմամբ ուժը կորցրած է ճանաչվել 2002թ. օգոստոսի 1-ի «Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» N 1245-Ն որոշման N1 հվելվածի 15.2-րդ կետով, որը սահմանափակում է որոշման կատարումը:
4. ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությունը, համաձայն պաշտոնական գրության՝ դիմորդների թիվը չի բավարարում խորհրդի կազմի համար սահմանված մինիմալ սահմանը, ուստի գործընթացն առ այսօր ընթացքի մեջ է,
5. ՀՀ ֆինանսների նախարարությունը, համաձայն պաշտոնական գրության՝ գործընթացն ընթացքի մեջ է:

Մոնիթորինգի չափորոշիչների (խորհրդի ձևավորման ընթացակարգի պահպանում, կայացրած նիստերի քանակ, նիստերի օրակարգի ձևավորմանը ՔՀԿ-ների մասնակցության, թափանցիկ գործունեության մակարդակ) հիմքով հավաքագրված վիճակագրական տվյալների վերլուծության արդյունքում կարելի է եզրակացնել, որ 2017թ-ի ընթացքում գործող խորհուրդներից.

1. առավել ակտիվ և արդյունավետ գործել են՝ **ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի** (իրականացրել են 4 նիստ, նիստերի օրակարգը 99%-ով ձևավորվել է անդամ ՔՀԿ-ների առաջադրմամբ), **ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի** (իրականացրել են 3 նիստ, նիստերի օրակարգը 40%-ով ձևավորվել է անդամ ՔՀԿ-ների առաջադրմամբ), **ՀՀ սփյուռքի** (իրականացրել են 3 նիստ, նիստերի օրակարգը 38%-ով ձևավորվել է անդամ ՔՀԿ-ների առաջադրմամբ), **ՀՀ առողջապահության** (իրականացրել են 3 նիստ, նիստերի օրակարգի ձևավորմանն անդամ ՔՀԿ-ները առաջադրմամբ հանդես չեն եկել) նախարարն կից հասարակական խորհուրդները:
2. Առավել անարդյունավետ են գործել՝ **ՀՀ տրանսպորտի կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների** (ձևավորման պահից առ 2017թ. նոյեմբեր ոչ մի նիստ չի հրավիրել, նիստեր հրավիրելու և օրակարգի ձևավորմանն անդամ ՔՀԿ-ները առաջադրմամբ հանդես չեն եկել), **ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների** (ձևավորման պահից առ 2017թ. նոյեմբեր ոչ մի նիստ չի հրավիրել, նիստեր հրավիրելու և օրակարգի ձևավորմանն անդամ ՔՀԿ-ները առաջադրմամբ հանդես չեն եկել), **ՀՀ բնապահպանության**, (2017թ ոչ մի նիստ չի հրավիրել, նիստեր հրավիրելու և օրակարգի ձևավորմանն անդամ ՔՀԿ-ները առաջադրմամբ հանդես չեն եկել), **ՀՀ գիտության և կրթության** (2017թ ոչ մի նիստ չի հրավիրել, նիստեր հրավիրելու և օրակարգի ձևավորմանն անդամ ՔՀԿ-ները առաջադրմամբ հանդես չեն եկել), **ՀՀ գյուղատնտեսության** (2017թ ոչ մի նիստ չի հրավիրել, նիստեր հրավիրելու և օրակարգի ձևավորմանն անդամ ՔՀԿ-ները առաջադրմամբ հանդես չեն եկել), **ՀՀ մշակույթի** (2017թ հրավիրել է մեկ նիստ, նիստեր հրավիրելու և օրակարգի ձևավորմանն անդամ ՔՀԿ-ները նախաձեռնությամբ հանդես չեն եկել) նախարարին կից հասարակական խորհուրդները (տես՝ գրաֆիկ 4 և հավելված 1):






**2.3 Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական e-draft.am կայքը**

Այս բաժնում ներկայացված է Հայաստանում քաղաքականության մշակման միասնական կառավարման մոդելի շրջանակում իրավական ակտերի նախագծերի հրապարակման ընդհանուր առցանց e-draft.am միասնական պաշտոնական կայքի գործունեության մոնիթորինգի արդյունքները: Նպատակ ունենալով տեսանելի դարձնել կայքի ընձեռած հնարավորություններն ուղղակիորեն՝ առանց արգելքի և միջնորդության մասնակցել քաղաքականությունների և իրավական ակտերի մշակման գործընթացին, հետևել ներկայացված առաջարկի և տեսակետի հետագա կարգավիճակին, համացանցում քննարկել նախագծի վերաբերյալ հետաքրքրող հարցերը նախագծի հեղինակի հետ:

Կայքի գործունեության ակտիվությունն ու դրա զարգացման հեռանկարները բացահայտելու համար մոնիթորինգի ուսումնասիրությունն իրականացվել է 2017թ նոյեմբերի դրությամբ հետևյալ վիճակագրական ցուցանիշների հավաքագրման հիմքով.

1. օգտատերերի թիվը՝ 8.624<sup>17</sup>
2. այցելուների թիվը՝ 31087
3. գրանցման ակտիվությունն ամսվա ընթացքում՝ 72
4. առավել ակտիվ նախարարությունների թիվը՝ 10
5. տեղադրված նախագծերի թիվը 567<sup>18</sup>
6. ակտիվ նախագծերի թիվը 41


Հավաքագրված վիճակագրական ցուցանիշները ցույց են տալիս, որ 2017թ հունվարից գործարկվող կայքի բաժանորդների թիվը բավական ակտիվ աճման տեմպերով ունի (տես՝ գրաֆիկ5):



<sup>17</sup> e\_draft.am կայքի վիճակագրություն բաժին; <https://www.e-draft.am/statistics>  
<sup>18</sup> e\_draft.am կայքի գլխավոր էջ, <https://www.e-draft.am/>

Մակայն այդուհանդերձ կայքի պատասխանատու ՀՀ արդարադատության նախարարության կողմից արձանագրվել է, որ մասնագիտական առաջարկների և դիտողությունների թիվը համարժեքորեն չի աճում :

Կայքի վիճակագրական տվյալները խոսում են այն մասին, որ օրինակ ՀՀ ֆինանսների<sup>19</sup>, ՀՀ արդարադատության, ՀՀ բնապահպանության, ՀՀ գյուղատնտեսության, ՀՀ կրթության և գիտության նախարարություններն իրավական ակտերի հանրային քննարկման միասնական մոդելի հարթակների հարցում նախապատվությունը տալիս են e-draft.am միասնական հարթակին, քան նախարարին կից հասարակական խորհուրդներին: Դա ակնառու է դառնում խորհուրդների գործունեության և e-draft.am կայքի վիճակագրական տվյալների համեմատական վերլուծության արդյունքում (տես՝ գրաֆիկ 4 և գրաֆիկ 6):



գրաֆիկ 6

ՀՀ Ֆինանսների նախարարությունում դեռևս չի ձևավորված նախարարին կից հասարակական խորհուրդը, իսկ բնապահպանության, գյուղատնտեսության և կրթության նախարարին կից խորհուրդներն ընթացիկ տարվա ընթացքում հրավիրել են ընդամենը մեկական նիստ: Մինչդեռ ինչպես տեսնում ենք e-draft.am կայքի վիճակագրական տվյալներից ՀՀ ֆինանսների<sup>20</sup>, ՀՀ արդարադատության, ՀՀ բնապահպանության, ՀՀ գյուղատնտեսության, ՀՀ կրթության և գիտության նախարարություններն ամենաշատ նախագծերն են տեղադրել կայքում:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը համաչափորեն և արդյունավետ օգտագործել է միասնական կառավարման համար ստեղծված երկու հարթակն էլ: Հնարավորություն ընձեռնելով թե՛ նախարարությանը, և թե՛ ՔՀԿ-ներին առավել մեծ թվով նախագծերի և հարցերի քննարկման ու հանրային մասնակցության համար:

Կայքում տեղադրված նախագծերի քանակի վիճակագրական տվյալներից դատելով (2017թ հունվար, նոյեմբեր ամիսների ընթացքում 567 նախագիծ) կարելի է եզրակացնել, որ կառավարությունը քաղաքական կամք է դրսևորում Հայաստանում քաղաքականության մշակման միասնական կառավարման մշակույթի ձևավորման հարցում և կարևորում է հատկապես e-draft.am միասնական հարթակը՝ գործընթացում առավել մեծաթիվ ՔՀԿ-ների և անհատների մասնակցությունն ապահովելու և կողմերի ժամանակի և ռեսուրսների տնտեսման համար:


Վերլուծելով կայքի ուսումնասիրության և ֆոկուս խմբային քննարկման ընթացքում հավաքագրված տեղեկատվության արդյունքները, կարելի է եզրակացնել.

1. առավել արդյունավետ կայքը վարել են 18 նախարարություններից 10, մասնավորապես՝ ՀՀ ֆինանսների, արդարադատության, բնապահպանության և գյուղատնտեսության նախարարությունները (տես՝ գրաֆիկ 6)
2. օգտատերերն առավել ակտիվ են եղել առանձին օրենքների նախագծերի շրջանակում, պայմանավորված նախագծերի հրապարակմանը նախորդող ժամանակահատվածում ՔՀԿ-ների շահերի պաշտպանության քարոզարշավների իրականացմամբ, օրինակ՝

<sup>19</sup> e\_draft.am կայքի գլխավոր էջ, <https://www.e-draft.am/>

<sup>20</sup> e\_draft.am կայքի գլխավոր էջ, <https://www.e-draft.am/>

«Ընտանեկան բռնությունների մասին» ՀՀ օրենքի նախագիծ, որը կայքում քննարկման է դրվել հոկտեմբեր - նոյեմբեր ամիսներին: Դրան նախորդող սեպտեմբեր ամսվանից սկսած՝ Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին կից հասարակական խորհուրդը, արևելյան գործընկերության հայաստանյան պլատֆորմը իրականացրել են նախագծի հանրային քննարկումներ և հանրային մոբիլիզացիայի քարոզարշավ (տես՝ գրաֆիկ 7):



գրաֆիկ 7

- կայքի բաժանորդների թվի բավական ակտիվ աճման տեղեկացումները հանդերձ առկա է մասնագիտական առաջարկների և դիտողությունների դեֆիցիտ, ինչի մասին խոսեց կայքի պատասխանատու ՀՀ արդարադատության նախարարության ադմինիստրատորը: Վերջինս հավաստեց, որ գրառումների գերակշիռ մասը միտինգային, հոբետորական, կամ զագրախոսության բովանդակությամբ նյութեր են, որոնք զտվում են և տեղ չեն գտնում կայքում, այսինքն չեն հասնում իրենց կողմից ակնկալված հասցեատերերին:
- նախագծի լրամշակված տարբերակի և ընթացիկ կարգավիճակի մասին տեղեկատվության բացակայություն, ընդհուպ մինչև ԱԺ-ի քննարկման ներկայացումը, ինչը ֆոկուս խմբային քննարկման մասնակից ՔՀԿ-ները դիտարկում են լուրջ բացթողում մասնակցային գործընթացի թափանցիկության և հաշվետվողականության պարտավորության կատարման տեսակետից:

#### 2.4. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի օրինաստեղծ գործընթացում ՔՀԿ-ների մասնակցության առկա վիճակը

Մտորն ներկայացված է Հայաստանում քաղաքականության և իրավական ակտերի մշակման միասնական կառավարման մոդելի համատեքստում ՀՀ Ազգային ժողովի գործունեության ներկա վիճակի վերաբերյալ ուսումնասիրության արդյունքները:

Ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ ՀՀ ԱԺ-ի մշտական հանձնաժողովների հանրային քննարկումների և խորհրդարանական լուսմների վերաբերյալ առանձնացված տեղեկատվական բաժին գոյություն չունի: Չի վարվում ՔՀԿ-ների մասնակցության և ներկայացված առաջարկների մասին տեղեկատվության համակարգում և այն չի հանրայնացվում:

ՀՀ ԱԺ-ի պաշտոնական կայքի ուսումնասիրության արդյունքում հետաքրքրող տեղեկատվությունը չհայտնաբերելու պատճառով ՀՀ ԱԺ-ի աշխատակազմի ղեկավարին հղված հարցմանն ի պատասխան, էլեկտրոնային փոստով ստացված պաշտոնական գրության համաձայն տեղեկացանք որ. («ՀՀ ԱԺ հանձնաժողովների բոլոր լուսմների և հանրային քննարկումների մասին տեղեկատվությունը հասանելի է ՀՀ ԱԺ պաշտոնական կայքի ([www.parliament.am](http://www.parliament.am)) «Լուրեր» բաժնում»), որը պարունակում է տեղեկատվություն բացառապես նիստի օրվա և օրակարգի մասին: Մինչդեռ չորրորդ և հինգերորդ գումարման ՀՀ Ազգային ժողովի կայքում խորհրդարանական լուսմների և հանրային քննարկումների մասին հայտարարությունները և օրակարգը տեղադրվում էր ինչպես լուրերի այնպես էլ մշտական հանձնաժողովների էջերում՝ առանձնացված: Ավելին

մշտական հանձնաժողովների էջում տեղադրվում էր նաև նիստերի օրակարգին վերաբերվող նյութերը, արձանագրությունները:

Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ ՔՀԿ-ների համար ՀՀ Ազգային ժողովի օրինաստեղծ գործընթացում սահմանված է մասնակցության բաց և թափանցիկ ընթացակարգ: Սակայն այդ ընթացակարգով սահմանված իրավունքի իրացման խնդիր կա հանրային իրազեկվածության և մասնակցային հմտությունների ցածր մակարդակի պատճառով:

## **2.5 Քաղաքականության և իրավական ակտերի մշակման միասնական մոդելի վերաբերյալ նախարարին կից հասարակական խորհրդի գործունեության դիտորդության և ֆոկուս խմբային քննարկման ընթացքում հավաքագրած տեղեկատվություն**

Այստեղ ներկայացված տեղեկատվությունը ձեռք է բերվել նախարարին կից հասարակական խորհրդի նիստերի դիտորդության ընթացքում՝ կազմակերպման և վարման վերաբերյալ դիտարկումների, խորհուրդի քարտուղարների և անդամների հետ ունեցած գրույցների, ինչպես նաև «Հանրային ցանցի» անդամ ու e-draft.am կայքի օգտատեր կազմակերպությունների հետ իրականացրած ֆոկուս խմբային քննարկման ընթացքում: Համաձայն հավաքագրված տեղեկատվության.

1. Խորհրդի անդամները նիստին մասնակցելուց առաջ ծանոթանում են բացառապես իրենց ոլորտին վերաբերվող հարցերի վերաբերյալ ստացած նյութերի հետ և ակտիվ մասնակցում են այդ նախագծի քննարկմանը:
2. Հիմնականում քննարկվող նախագծերի վերաբերյալ իրենց դիտարկումներն ու առաջարկները նիստից առաջ չեն ներկայացնում խորհրդի քարտուղարին, իսկ ներկայացվածներն էլ չեն տրամադրվում մյուս անդամներին, ուստի նիստի ընթացքում կարիք է առաջանում դրանց նեղ մասնագիտական քննարկման համար ստեղծել ժամանակավոր աշխատանքային խմբեր, ինչը խոչընդոտում է նիստի ընթացքում որոշումների կայացմանը:
3. Խորհուրդների նիստերի ընթացքում հավաքագրված առաջարկներն ու դիտորդությունները ոչ բոլոր նախարարություններում են ներառվում ամփոփաթեթում, խորհրդի անդամները հնարավորություն չունեն տեղեկանալու նախագծերի հետագա կարգավիճակի մասին, այդ թվում նաև e-draft.am կայքից, ինչը դիտարկում են լուրջ բացթողում մասնակցային գործընթացի թափանցիկության և հաշվետվողականության պարտավորության կատարման տեսակետից:
4. Խորհրդի անդամները հիմնականում պասիվ են e-draft.am –ում, քանի որ ուղղակի հարցադրումներով և աշխատանքային խմբերում իրենց դիրքորոշումները բարձրաձայնելու և առաջ մղելու հնարավորություն ունեն խորհրդում:
5. Խորհուրդների նիստերի օրակարգը շատ նախարարություններում խիտ են, ներառում են երկու և ավել իրավական ակտի, ռազմավարական և հաշվետվության փաստաթղթերի նախագծերի ներկայացում և քննարկում: Քննարկումներն ընթանում են շատ բուռն, ուստի գրեթե մշտապես թեմատիկ առանձնահատկություններից ելնելով կարիք է առաջանում ձևավորել նեղ մասնագիտական ժամանակավոր աշխատանքային խմբեր, ինչը ևս փաստորեն խոչընդոտում է նիստի արդյունավետությանը, որոշումների կայացման տեսանկյունից:
6. Խորհրդի անդամները նիստեր հրավիրելու և օրակարգային հարցեր առաջադրելու իրավունքը չիրացնելու փաստը մեկնաբանում են աշխատակարգով սահմանված 1/3-ի սահմանը չհաղթահարելու հարցում գործընկերներից աջակցություն չստանալու մտահոգիչ փաստով:
7. e-draft.am կայքի օգտատերերի համար կարիք կա սահմանել՝ կայքում գրառումներ անելու էթիկայի նորմեր, քանի որ ավելի շատ ոչ թե մասնագիտական կարծիքների, փաստերի վրա հիմնված առաջարկների, օգտակար դիրքորոշումների գրառումների են հանդիպում, այլ հերյուրանքներ, անպարկեշտ մեկնաբանություններ, զագրախոսություններ, որոնք բնականաբար կայքի ադմինի կողմից չի ընդունվում:

8. Ոչ մի հասարակական խորհուրդ չի պատրաստել և չի հանրայնացրել խորհրդի տարեկան գործունեության հաշվետվություն: Այս խնդիրը խորհուրդների քարտուղարների մեկնաբանությամբ պայմանավորված է այն հանգամանքով, որ Կառավարության 2015թ-ի նոյեմբերի 26-ի թիվ N 52 արձանագրային որոշման և նախարարի 2016 թ.-ի հրամանների հստակեցված չի հաշվետվության մշակման ընթացակարգը: Ուստի մասնավորապես հաշվետվությունը պատրաստող պատասխանատուի, ինչպես նաև տարեկան կտրվածքի հստակ սահմանման (օրացույցային, թե գործունեության մեկ տարի) բացակայության հետևանքով այս հարցի առնչությամբ խորհրդի պարտավորությունների լիարժեք իրականացման հարցում բացթողում կա անգամ ակտիվ գործող նախարարությունների հասարակական խորհուրդների կողմից:

### **Գլուխ 3. Հայաստանում քաղաքականության մշակման միասնական կառավարման առկա մոդելի գնահատման եզրակացություններն ու առաջարկները**

Դժվար է վիճարկել քաղաքականության մշակման միասնական կառավարման ինստիտուցիոնալ համակարգի կարևորությունը՝ Կառավարության բաց, թափանցիկ, մասնակցային և հաշվետու կառավարման երաշխիքների ապահովման և մշակույթի ձևավորման հարցում: Հավաքագրված տեղեկատվության վերլուծությունից կարելի է եզրակացնել, որ դրա համար ֆորմալ առումով ստեղծված է եվրոպական երկրների փորձի հիման վրա գործող ինստիտուցիոնալ համակարգ: Վերջինիս կայացման և զարգացման հարցում պետական մարմինների առավել պատասխանատու գործունեությունը և ՔՀԿ-ների առավել ակտիվ ներգրավվածության դերն ու կարևորությունը միանշանակ է: Վերլուծության արդյունքում կատարված եզրահանգումները և առաջարկները դիվերսիֆիկացվել են ըստ գործող հարթակների և շահագրգիռ կողմերի համար մշակված առաջարկությունների:

#### **3.1. Եզրակացություն նախարարին կից հասարակական խորհրդի վերաբերյալ**

1. Բոլոր խորհուրդները ձևավորվել են՝ պահպանելով կառավարության որոշմամբ հաստատված թափանցիկ և մրցույթային ընթացակարգերը:
2. Նախարարությունների մեծ մասը խախտվել է խորհրդի գործունեության, այսինքն նիստեր հրավիրելու ժամանակացույցը, այդ թվում խորհրդի անդամների պասիվության հետևանքով:
3. Բոլոր գործող խորհուրդները չեն մշակել և չեն հանրայնացրել խորհրդի գործունեության 2016թ տարեկան հաշվետվությունը:
4. Բացառությամբ 3 խորհուրդների (ՀՀ սպորտի և երիտասարդության, աշխատանքի և սոցիալական հարցերի և առողջապահության նախարարին կից խորհուրդներ) խորհրդի անդամները հանդես չեն եկել նիստ հրավիրելու և օրակարգ ձևավորելու իրավունքի իրացման նախաձեռնությամբ:
5. Առկա է որոշ նախարարությունների պաշտոնական կայքերում խորհուրդների գործունեության/ իրականացված նիստերի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվության անբավարար մակարդակ, կամ մատչելիության խնդիր:

#### **3.2. Եզրակացություն իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական e-draft.am կայքի վերաբերյալ**

1. կայքի բաժանորդների թվի բավական ակտիվ աճման տեղեկաց ունենալով հանդերձ առկա է մասնագիտական առաջարկների և դիտողությունների դեֆիցիտ,
2. նախագծի լրամշակված տարբերակի և ընթացիկ կարգավիճակի մասին տեղեկատվության բացակայություն,
3. կայքի նպատակային օգտագործման և հանրային վստահության դեֆիցիտ:

**3.3. Եզրակացություն ՀՀ Ազգային ժողովի օրինաստեղծ գործընթացում խորհրդարանական լսումների, հանրային քննարկումների համակարգի վերաբերյալ**

1. ԱԺ-ի պաշտոնական կայքում առկա չէ խորհրդարանական լսումների առանձնացված էջ, ուր տեղադրվում է՝ լսումների մասին հայտարարությունները, օրակարգը, քննարկվող նյութերը և արձանագրությունները,
2. Չի վարվում վիճակագրություն կայացված լսումների և նրանցում ներգրավված ՔՀԿ ներկայացուցիչների վերաբերյալ,
3. Ցածր է ՔՀԿ-ների իրազեկվածության և տեղեկատվությունից օգտվելու համապատասխան հմտությունների մակարդակը:

**3.4. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Վերլուծության արդյունքում եզրահանգումների հիման վրա բացահայտված խնդիրների լուծման առաջարկություններ.

**3.4.1. Առաջարկվում է ծրագրի շրջանակում աջակցել.**

1. Նախարարին կից հասարակական խորհուրդների ձևավորմանը,
2. Նախարարին կից հասարակական խորհրդի գործունեության տարեկան հաշվետվության հրապարակմանը,
3. ՔՀԿ-ների իրազեկվածության և մասնակցային կառավարման հմտությունների զարգացմանը,
4. e-draft.am կայքի արդյունավետության բարձրացմանը,
5. ՀՀ Ազգային ժողովում առկա խորհրդարանական լսումների և հանրային քննարկումների համակարգված տեղեկատվական բազայի ձևավորմանը:

**3.4.2 Նախարարություններին առաջարկվում է՝**

1. Բարելավել պաշտոնական կայքերի տեղեկատվության համակարգը և ստեղծել առանձնացված էջ/բաժին՝ նախարարին կից հասարակական խորհրդի վերաբերյալ բավարար պարզունակ, համակարգված և լիարժեք տեղեկատվությունը օգտատերերին հասանելի դարձնելու համար,
2. Խորհրդի նիստում և աշխատանքային քննարկումների ընթացքում հավաքագրված առաջարկները ներառել ամփոփաթեթում,
3. Նախարարության և e-draft.am պաշտոնական կայքերում ավելացնել լրացուցիչ տեղեկատվություն՝ լրամշակված նախագծերի և նախագծերի ընթացիկ կարգավիճակի վերաբերյալ թարմ տեղեկատվություն ապահովելու նպատակով:

**3.4.3 ՀՀ Ազգային ժողովին առաջարկվում է՝**

1. Բարելավել պաշտոնական կայքի տեղեկատվության համակարգը և ստեղծել առանձնացված էջ/բաժին՝ խորհրդարանական լսումների և հանրային քննարկումների մասին բավարար պարզունակ, համակարգված և լիարժեք տեղեկատվությունը օգտատերերին հասանելի դարձնելու համար:
2. Մշակել ՔՀԿ ների բազա ԱԺ ոլորտային յուրաքանչյուր հանձնաժողովի համար՝ նպատակային տեղեկատվության տարածման նպատակով:

**3.4.4 Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին առաջարկվում է՝**

1. Նախարարին կից հասարակական խորհրդում ձևավորել առողջ գործընկերային հարաբերություններ ի նպաստ աշխատակարգով սահմանված՝ նիստեր հրավիրելու, օրակարգ, նեղ մասնագիտական ժամանակավոր աշխատանքային խմբեր ձևավորելու իրավունքների իրացման համար,
2. Բաժանորդագրվել e-draft.am կայքին և հետևողական լինեն հետաքրքրության ոլորտում իրավական ակտերի վերաբերյալ հավաստի տվյալների վրա հիմնված առաջարկների, տեսակետների և դիրքորոշումներ ներկայացնելու հարցում,

3. Ձևավորել ոլորտային ցանցեր/համագործակցության հարթակ, փաստերի վրա հիմնված առաջարկների մշակման համար բավար փորձագիտական ներուժ հավաքագրելու և որոշումների կայացման վրա հանրային ազդեցությունը բարձրացնելու նպատակով,
4. Հետևել ՀՀ ԱԺ-ի պաշտոնական կայքի լուրեր բաժնին, խորհրդարանական լուսմների և հանրային քննարկումների մասին իրազեկվելու, գրանցվելու մասնակցության, ինչպես նաև մոբիլիզանալ՝ ԱԺ-ի պաշտոնական կայքում խորհրդարանական լուսմների և հանրային քննարկումների մասին համակարգված և լիարժեք տեղեկատվությունը առանձնացված էջ/բաժնում օգտատերերին հասանելի դարձնելու լոբինգի համար:

## ՀՀ նախարարին կից 18 հասարակական խորհրդի 2016 և 2017թթ. գործունեության վիճակագրական տվյալները

Ուսումնասիրության ընթացքում Հայաստանի Հանրապետության 18 նախարարներին կից հասարակական խորհուրդների գործունեության առկա վիճակի մասին հավաքագրված վիճակագրական տվյալները.

### 1) ՀՀ միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարարություն

ՀՀ միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարարությունը<sup>21</sup> 2017թ.-ի նոյեմբերի դրությամբ դեռ չի կատարել Կառավարության 2015թ-ի նոյեմբերի 26-ի թիվ N 52 արձանագրային որոշումը, համաձայն բանավոր պատասխանի, պայմանավորված նախարարության ձևավորման և գործառույթների հստակեցման գործընթացում գտնվելով, ուստի նախարարին կից հասարակական խորհուրդը դեռ ձևավորված չէ:

### 2) ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

Կառավարության 2015թ-ի նոյեմբերի 26-ի թիվ N 52 արձանագրային որոշման ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի **2016 թ.-ի հունիսի 3-ի** N 62-Ս/1 հրամանի սահմանված ընթացակարգի համաձայն ձևավորվել է նախարարին կից հասարակական խորհուրդը<sup>22</sup> և հաստատվել է խորհրդի կազմը: Խորհրդի ռոտացիայի ընտրությունները հիշյալ հրամանի համաձայն իրականացվելու է 2018թ-ի հունիսին:

Խորհրդի կազմում ընդգրկված են 16 ՔՀԿ-ների լիազոր ներկայացուցիչ և 3 անհատ փորձագետ:

Խորհրդի ձևավորման պահից ներառյալ 2017թ. նոյեմբեր ամիսը իրականացվել է 4 նիստ, որից մեկը 2016թ-ին, երեքը՝ 2017թ-ին: Նիստերի ընթացքում քննարկվել են 3 իրավական ակտի նախագիծ, երեխաների ու ծերերի խնամքի, Զբաղվածության և սոցիալական ծառայությունների քաղաքականությունների բարեփոխումներին վերաբերվող փաստաթղթեր:

Խորհրդի նիստերի օրակարգի ձևավորման գործընթացում մասնակցություն են ունեցել «Սելվ դը Չիլդրեն Ինթերնեշնլ»-ի Հայաստանյան ներկայացուցչությունը, «Արագա» ԲՀԿ-ն, «Արմավիրի զարգացման կենտրոն» ՀԿ-ն, ու «Ակունք» ԷՍՀԿ ՀԿ-ն հանդես գալով նիստ հրավիրելու և օրակարգային հարցի առաջադրմամբ:

### 3) ՀՀ առողջապահության նախարարություն`

ՀՀ առողջապահության նախարարին կից հասարակական խորհուրդը<sup>23</sup> ստեղծելու, հասարակական խորհրդի աշխատակարգը հաստատելու մասին որոշման **06 մայիս 2016թ.** N 1370-Ս հրամանի սահմանված ընթացակարգի համաձայն` 10 մայիսի 2016թ N 1390-Ս հրամանով հաստատվել է խորհրդի կազմը, ուստի վերընտրությունները իրականացվելու է 2018թ-ի մայիսին:

Խորհրդի կազմում ընդգրկված են 12 ՔՀԿ-ների լիազոր ներկայացուցիչ և 2 անհատ փորձագետ:

Խորհրդի ձևավորման պահից ներառյալ 2017թ. նոյեմբեր ամիսը իրականացվել է` 5 նիստ, որոնցից երկուսը 2016թ-ի, իսկ 3 2017թ-ին: Նիստերի համար աշխատակարգով սահմանված ժամանակացույցը պահպանված է: Նիստերի ընթացքում քննարկվել են` «Բժշկական համակարգի հաշտարարի գործունեության մասին» օրենքի նախագծի հայեցակարգը, մարդու իրավունքների պաշտպանի ազգային ռազմավարության 2017-2019թթ գործողությունների ընթացքին վերաբերվող հարցեր, առողջապահության ոլորտում ստվերի և կոռուպցիայի ռիսկի նվազեցմանն ուղղված առաջարկների փաթեթը, ծխելու դեմ պայքարի ռազմավարության 2017-2020թթ միջոցառումների պլանի նախագիծը, տղամարդու առողջության խնդրի արդիականությունը առողջապահության ոլորտում իրականացվող ծրագրերում:

<sup>21</sup> ՀՀ միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարարության պաշտոնական կայք <http://www.mieir.am>

<sup>22</sup> ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին կից հասարակական խորհուրդ պաշտոնական կայքի հասցեն [http://www.mlsa.am/?page\\_id=2839](http://www.mlsa.am/?page_id=2839)

<sup>23</sup> ՀՀ առողջապահության նախարարին կից հասարակական խորհուրդի պաշտոնական կայքի հասցեն <http://www.moh.am/#1/176>



Խորհրդի նիստերի օրակարգի ձևավորման գործընթացում նախաձեռնությամբ հանդես է եկել խորհրդի անդամ «Օրենսդրության զարգացման և հետազոտությունների կենտրոն» հիմնադրամը: Նիստերի համար աշխատակարգով սանմանված ժամանակացույցը պահպանված է:

#### **4) ՀՀ արդարադատության նախարարություն`**

ՀՀ արդարադատության նախարարին կից հասարակական խորհրդի<sup>24</sup> անհատական կազմը հաստատելու և ՀՀ արդարադատության նախարարի 2014 թվականի մայիսի 3-ի N131-Ս հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին ՀՀ արդարադատության նախարարի **25 մայիսի 2016թ.** N 185/2-Ս հրամանով հաստատվել է, նախարարին կից հասարակական խորհրդի նոր կազմն ու աշխատակարգը, Կառավարության 2015թ-ի նոյեմբերի 26-ի թիվ N 52 արձանագրային որոշման համաձայն: ՀՀ արդարադատության նախարարի 2016թ. սեպտեմբերի 8-ի N 383-Ս հրամաններով համալրվել է խորհրդի կազմը: Համաձայն 25 մայիսի 2016թ N 185/2-Ս հրամանի խորհրդի կազմի վերընտրությունները տեղի են ունենալու 2018թ-ին:

Խորհրդի կազմում ընդգրկված են 26 ՔՀԿ-ներ:

Խորհրդի ձևավորման պահից ներառյալ 2017թ. նոյեմբեր ամիսը իրականացվել է` խորհրդի մեկ նիստ, օրակարգում դրված են եղել 1 օրենքի նախագիծ և Մարդու իրավունքների պաշտպանության 2017թ.-ի գործողությունների պլանի կատարման հաշվետվությունը:

Խորհրդի անդամները հանդես չեն եկել նիստ հրավիրելու և օրակարգ ձևավորելու առաջարկներով:

#### **5) ՀՀ արտագարգ իրավիճակների նախարարություն`**

Ի պատասխան մեր հարցման նախարարության նոյեմբերի 30-ի պաշտոնական գրության տեղեկացրել են, որ ի կատարումն «Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թ. ապրիլի 18-ի N16 արձանագրային որոշման մեջ լրացում կատարելու և ՀՀ նախարարին կից հասարակական խորհրդի օրինակելի աշխատակարգին հավանություն տալու մասին» 2015 թ.նոյեմբերի 26-ի N52 արձանագրային որոշման, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարին կից հասարակական խորհրդի<sup>25</sup> կազմավորման գործընթացն ընթացքի մեջ է: Խորհրդի ձևավորման գործընթացի ուշացումը պայմանավորված է` նախ նախարարության վերաձևավորման, ապա` նոր նախարարի նաշանակման հետ կապված խնդիրներով:

#### **6) ՀՀ արտաքին գործերի նախարարություն`**

Ի պատասխան «Արագ» ԲՀԿ-ի նոյոբերի 10 թիվ 19-Կ գրառության, ՀՀ արտաքին գործերի նախարարության նոյեմբերի 15-ի թիվ 1112/17006 գրությունից տեղեկացանք, որ ելնելով արտաքին գործերի նախարարության գործառնությունների առանձնահատկություններից ՀՀ Կառավարության 2017թ մայիսի 18-ի N499 որոշմամբ ուժը կորցրած է ճանաչվել 2002թ. օգոստոսի 1-ի «Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» N 1245-Ն որոշման N1 հվելվածի 15.2-րդ կետը: Ուստի ՀՀ արտաքին գործերի նախարարին կից հասարակական խորհուրդ չի գործում:

#### **7) ՀՀ բնապահպանության նախարարություն`**

ՀՀ բնապահպանության նախարարի **14 հունիսի 2016թ.** ՀՀ բնապահպանության նախարարի 2014թ սեպտեմբերի 2-ի «ՀՀ բնապահպանության նախարարին կից հասարակական խորհուրդ ստեղծելու և հասարակական խորհրդի կազմն ու աշխատակարգը հաստատելու մասին» N 256-Ս հրամանով հաստատված N 1 հավելվածը շարադրել նոր հավելվածով հրամանի համաձայն նախարարին կից ձևավորված հասարակական խորհուրդը<sup>26</sup> վերընտրվել է Կառավարության 2015թ-ի նոյեմբերի 26-ի թիվ N 52 արձանագրային որոշմամբ հաստատված ընթացակարգով: 12 հունվարի 2017թ N 145-Ս, 15 մայիսի 2017թ N 9-Ս, 22 հունիսի 2017թ. N 187-Ս հրամաններով համալրվել է խորհրդի կազմը:

<sup>24</sup> ՀՀ արդարադատության նախարարին կից հասարակական խորհրդի պաշտոնական կայքի հասցեն <http://www.moj.am/page/576>

<sup>25</sup> ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարին կից հասարակական խորհրդի ձևավորման դիմումների հավաքագրման հայտարարության պաշտոնական հասցեն <http://www.mes.am/hy/haytararutyun/>

<sup>26</sup> ՀՀ բնապահպանության նախարարին կից հասարակական խորհուրդի պաշտոնական հասցեն <http://www.mnp.am/am/pages/139>

Համաձայն **14 հունիսի 2016թ** ՀՀ բնապահպանության նախարարի N 256-Ա հրամանի խորհրդի կազմի վերընտրությունները տեղի են ունենալու **2018թ-ի հունիսին**:

Խորհրդի կազմում ընդգրկված են 23 ՔՀԿ-ներ:

Խորհրդի ձևավորման պահից ներառյալ 2017թ. նոյեմբեր ամիսը իրականացվել է՝ 3 նիստ, բոլորը 2016թ-ի ընթացքում, 2017թ-ին նիստեր չեն գումարվել: Խորհրդի նիստերում քննարկվել են ոլորտին վերաբերվող մեկ օրենքի նախագիծ, ոլորտի քաղաքականություններին վերաբերվող 3 հիմնահարց և մեկ ընթացիկ՝ Ամուլասարի հանքավայրի շահագործման փոփոխված նախագծի բնապահպանական փորձաքննության եզրակացության հարցերը:

#### **8) ՀՀ գյուղատնտեսության նախարարություն՝**

ՀՀ գյուղատնտեսության նախարարի 18 ապրիլի 2016թ N 109-Ա հրամանով ուժը կորցրած է ճանաչվել 2015թ ապրիլի 13-ի N 115-Ա հրամանը և հաստատվել է նախարարին կից հասարակական խորհրդի<sup>27</sup> կազմն ու աշխատակարգը՝ Կառավարության 2015թ-ի նոյեմբերի 26-ի թիվ N 52 արձանագրային որոշմամբ հաստատված ընթացակարգով: Համաձայն 18 ապրիլի 2016թ N 109-Ա հրամանի խորհրդի կազմը ենթակա է վերընտրության 2018թ-ի ապրիլին:

Խորհրդի կազմում ընդգրկված են 21 ՔՀԿ ներկայացուցիչ, նրանցից 4 անհատ փորձագետ:

Խորհրդի ձևավորման պահից ներառյալ 2017թ. նոյեմբեր ամիսը իրականացվել է՝ 3 նիստ, որոնցից երկուսը՝ 2016թ-ին, մեկը՝ 2017թ-ին:

Խորհրդի նիստերին քննարկվել են՝ ՀՀ-ում գյուղատնտեսական կոպերատիվների զարգացման ծրագրի մշակման, օրգանական շուկայի ներկա իրավիճակի, խնդիրների և հնարավորությունների, ոլորտի վերջին տարիների միտումների և գյուղատնտեսության զարգացման ռազմավարության հիմնական դրույթների, ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից 2017 թվականին մշակված գյուղոլորտի զարգացմանն ուղղված նոր ծրագրերի վերաբերյալ զեկույցները: Խորհրդի անդամ ՔՀԿ-ները հանդես չեն եկել նիստեր հրավիրելու և օրակարգի ձևավորման նախաձեռնությամբ:

#### **9) ՀՀ Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն՝**

Ի պատասխան «Արագ» ԲՀԿ-ի 10 նոյոմբերի թիվ 18-Կ հարցման, ՀՀ Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության նոյեմբերի 16-ի թիվ 07/16/6616.11 գրությունից տեղեկացանք, որ ՀՀ Կառավարության 2016թ-ի մարտի 31-ի N337-Ն որոշման 16-րդ կետի պահանջի նախարարությունն իր պաշտոնական կայքում<sup>28</sup> սահմանված կարգով հայտարարություններ է տեղադրել նախարարին կից հասարակական խորհրդի ձևավորման դիմումներ հավաքագրելու համար: Սակայն դիմորդների թիվը չի բավարարում խորհրդի կազմի համար սահմանված մինիմալ սահմանը (15-ի փոխարեն դիմել են ընդամենը 10 կազմակերպություն), ուստի խորհուրդը ձևավորման գործընթացում է:

#### **10) ՀՀ կրթության և գիտության նախարարություն՝**

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2002թ սեպտեմբերի 12-ի N 1579 որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 14.2-րդ կետը և 2015թ-ի նոյեմբերի 26-ի թիվ N 52 արձանագրային որոշումը ՀՀ կրթության և գիտության նախարարին կից հասարակական խորհրդի աշխատակարգը<sup>29</sup> և կազմը հաստատելու **մասին 2016թ-ի** հրամանով ձևավորվել է խորհուրդը: Հրամանը չունի համար և ամսաթիվ, ուստի խորհրդի վերընտրությունների ժամկետը 2018թ-ի ընթացքում ճշգրտման կարիք ունի:

<sup>27</sup> ՀՀ գյուղատնտեսության նախարարին կից հասարակական խորհրդի պաշտոնական հասցեն

<http://minagro.am/%D5%B6%D5%A1%D5%AD%D5%A1%D6%80%D5%A1%D6%80%D5%B6%D5%A1%D5%AD%D5%A1%D6%80%D5%A1%D6%80%D5%AB%D5%B6-%D5%AF%D5%AB%D6%81-%D5%B0%D5%A1%D5%BD%D5%A1%D6%80%D5%A1%D5%AF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%AD%D5%B8%D6%80%D5%B0%D5%B8%D6%82%D6%80%D5%A4/%D6%85%D6%80%D5%A1%D5%AF%D5%A1%D6%80%D5%A3-%D6%87-%D5%A1%D6%80%D5%B1%D5%A1%D5%B6%D5%A1%D5%A3%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6/>

<sup>28</sup> ՀՀ Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարին կից հասարակական խորհրդի ձևավորման համար հայտարարության պաշտոնական հասցեն <http://www.minenergy.am/article/977>

<sup>29</sup> <http://edu.am/index.php/am/about/view/56>

Խորհրդի կազմում ընդգրկված ՔՀԿ-ների թիվը 21 են, սակայն կարող է այս տվյալը հավաստի չլինել, քանի որ այն ճշգրտված է նիստի մասնակիցների ցանկից, կազմի մասին պաշտոնական այլ տվյալ հասանելի չլինելու հետևանքով:

Խորհրդի ձևավորման պահից ներառյալ 2017թ. նոյեմբեր ամիսը իրականացվել է<sup>30</sup> երկու նիստ մեկը 2016թ. հոկտեմբերին, երկրորդը՝ 2017թ.:

Խորհրդի առաջին նիստում քննարկվել է ՀՀ կրթության զարգացման 2016-2025թթ պետական ծրագրի նախագիծը: 2017թ փետրվարի նիստում քննարկվել է հանրակրթության ոլորտի զարգացման նորարարական ծրագրերի նախագիծը:

Խորհրդի ձևավորման պահից առ 2017թ. նոյեմբեր ամիսը չի պատրաստվել և չի հանրայնացվել խորհրդի 2016թ-ի գործունեության հաշվետվությունը: ՔՀԿ-ները չեն մասնակցել օրակարգի ձևավորմանը:

#### 11) ՀՀ մշակույթի նախարարություն՝

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի սեպտեմբերի 11-ի N 1298-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 14.2-րդ կետը և Հայաստանի Հանրապետության 2015 թվականի նոյեմբերի 26-ի N 16 արձանագրային որոշման 11-րդ կետը. Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարի 2016 թվականի մայիսի 20-ի «Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարին կից հասարակական խորհուրդ<sup>31</sup> ստեղծելու և դրա անհատական կազմը հաստատելու մասին» N 245-Ա հրամանի հավելվածով հաստատվել է խորհրդի աշխատակարգը, ևս 3 հրամաններով հաստատվել է խորհրդի կազմը:

Խորհրդի կազմում ընդգրկված ՔՀԿ-ների թիվը 22 են, որոնցից 3 անհատ փորձագետներ:

Խորհուրդը ձևավորման պահից ներառյալ 2017թ. նոյեմբեր իրականացրել է 2 նիստ որտեղ քննարկվել են 4 օրենքների նախագծեր և Մարդու իրավունքների պաշտպանության 2017թ. գործողությունների պլանի կատարմանի հաշվետվությունը:

Խորհրդի գործունեության/նիստերի մասին տեղեկատվությունը բացակայում է, ինչի մասին նախարարությանը հղած հարցմանն ի պատասխան գրությունից տեղեկացանք, որ կայքում տեղեկատվությունը կա, պարզապես այն ամբողջական և մատչելի չէ կայքի սահմանափակ հնարավորության հետևանքով:

Խորհրդի անդամները հանդես չեն եկել նիստ հրավիրելու և օրակարգային հարցերի առաջադրմամբ:

#### 12) ՀՀ պաշտպանության նախարարություն՝

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2015թ. նոյեմբերի 26-ի N 52 արձանագրային որոշման և ՀՀ կառավարության 2016թ. մարտի 31-ի N 337-Ն որոշման պահանջները, ինչպես նաև ամփոփելով ՀՀ պաշտպանության նախարարին կից հասարակական խորհրդին անդամակցության համար սահմանված կարգով ներկայացված հայտերի քննարկման արդյունքները՝ ՀՀ պաշտպանության նախարարը 07.06.2016թ. ստորագրել է «ՀՀ պաշտպանության նախարարին կից հասարակական խորհուրդ ստեղծելու, հասարակական խորհրդի աշխատակարգը և հասարակական խորհրդի կազմը հաստատելու մասին» հրաման: Համաձայն սույն հրամանի խորհրդի վերընտրությունները տեղի կունենան 2018թ. Հունիսին:

Խորհրդի կազմում ընդգրկված են 13 ՔՀԿ լիազոր ներկայացուցիչ և նախարարի խորհրդականը:

Համաձայն ՀՀ կառավարության 2015թ. նոյեմբերի 26-ի N 52 արձանագրային որոշմամբ հաստատված օրինակելի աշխատակարգի նախարարության պաշտոնյան չի կարող հանդես գալ որպես խորհրդի անդամ, այլ կարող է ունենալ միայն հրավիրյալի կարգավիճակ, կամ հանդես գալ որպես խորհրդի քարտուղար/համակարգող:

<sup>30</sup> ՀՀ կրթության և գիտության նախարարին կից հասարակական խորհրդի նիստերի մասին <http://edu.am/index.php/am/documents/index/130>

<sup>31</sup> ՀՀ մշակույթի նախարարին կից հասարակական խորհուրդ պաշտոնական հասցեն <http://mincult.am/advisers.html>

Խորհրդի ձևավորման պահից ներառյալ 2017թ. նոյեմբեր ամիսը իրականացված նիստերի մասին հասանելի տեղեկատվություն չկա, պայմանավորված քննարկվող հարցերի գաղտնիությամբ:

### **13) ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն՝**

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի նոյեմբերի 26-ի N 52 արձանագրային որոշման 3-րդ կետի 2-րդ ենթակետի և համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 12-ի N 825-Ն որոշման N 1 հավելվածի 14.2-րդ կետի ստեղծվել է ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարին կից հասարակական խորհուրդը<sup>32</sup>: Հիմք ընդունելով անդամակցության համար սահմանված կարգով ներկայացված հայտերի քննարկման արդյունքները՝ ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի 11 մայիսի 2016թ N 67-Ա/1 հրամանով հաստատվել է խորհրդի նոր աշխատակարգն ու կազմը: Խորհրդի աշխատակարգի համաձայն խորհրդի ընտրությունները նախատեսվում է 2018թ մայիսին:

Խորհրդի կազմում ընդգրկված են 16 կազմակերպություն:

Խորհրդի ձևավորման պահից ներառյալ 2017թ. նոյեմբեր ամիսը իրականացվել 6 նիստ, որից երկուսը 2016թ-ին չորսը 2017թ-ին:

Խորհրդի նիստերի արձանագրությունները կայքում բացակայում են: Ի պատասխան մեր հարցման նախարարության նոյեմբերի 19-ի պաշտոնական պատասխանի համաձայն տեղեկացանք, որ հիշյալ տեղեկատվության բացակայությունը պայմանավորված է բացառապես կայքի տեխնիկական հնարավորությունների սահմանափակությամբ, որը նախատեսված է լուծել նոր կայքի պատրաստման ընթացքում: Միաժամանակ տեղեկացանք, որ իրականացվել է հասարակական խորհրդի 4 նիստ, որոնց օրակարգը ձևավորվել է խորհրդի անդամ ՔՀԿ ներկայացուցիչների կողմից, բացառությամբ մեկ հարցի: Նիստերի օրակարգի ձևավորման համար նախարարության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետը նիստ հրավիրելու հայտարարության հետ հարցում է հղում խորհրդի անդամներին օրակարգային հարց առաջադրելու մասին, ներկայացված առաջարկների հիման վրա նախարարը հաստատում է նիստի օրակարգը:

### **14) ՀՀ սփյուռքի նախարարություն**

Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարին կից հասարակական խորհուրդը ստեղծվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մարտի 31-ի N 337-Ն որոշմամբ:

Հասարակական խորհրդի աշխատակարգի օրինակելի ձևը հաստատվել է ՀՀ կառավարության 2015 թվականի նոյեմբերի 26-ի թիվ 52 արձանագրային որոշմամբ, որի հիման վրա Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարի 2016 թվականի ապրիլի 12-ի N82-Ա հրամանով հաստատվել է Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարին կից հասարակական խորհրդի աշխատակարգը:

2016 թվականի ապրիլի 29-ի N103-Ա հրամանով հաստատվել է նախարարին կից հասարակական խորհրդի կազմը: Համաձայն որի խորհրդի վերընտրությունները տեղի կունենան 2018թ ապրիլին:

Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարին կից հասարակական խորհուրդն<sup>33</sup> ունի այն առանձնահատկությունը, որ բացի իր կազմում ընդգրկված հայաստանյան հասարակական կազմակերպություններից, գանգվածային լրատվության միջոցներից, ազգային փոքրամասնություններ ներկայացնող կազմակերպություններից, ինչպես նաև հեղինակավոր և ճանաչված անձանցից, ընդգրկում է նաև սփյուռքյան կառույցներ և սփյուռքահայերի: Մի հանգամանք, որը հնարավորություն է ընձեռում աշխարհի բոլոր անկյուններում գտնվող հայերին ավելի տեղեկացված լինել Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարության գործունեությանը, քննարկել իրականացվող ծրագրերը և դրանց արդյունավետությունը:

<sup>32</sup> ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարին կից հասարակական խորհրդի պաշտոնական հասցեն <http://www.msy.am/category/nakhararin-kic-kolegia.html>

<sup>33</sup> Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարին կից հասարակական խորհրդի պաշտոնական հասցեն [http://www.mindiaspora.am/am/hasarakakan\\_xorhurd](http://www.mindiaspora.am/am/hasarakakan_xorhurd)

Հայաստանում մշտապես չբնակվող խորհրդի անդամ սփյուռքահայերը կարող են մասնակցել խորհրդի նիստերին հեռակա կարգով՝ քննարկվող հարցերի վերաբերյալ համացանցի միջոցով ուղարկելով իրենց առաջարկություններն ու դիտողությունները, ինչպես նաև հեռակոնֆերանսների միջոցով:

Խորհրդի կազմում ընդգրկված են 20 ՔՀԿ լիազոր ներկայացուցիչ, որոնցից 3 անհատ փորձագետներ են:

Խորհրդի ձևավորման պահից ներառյալ 2017թ. նոյեմբեր ամիսը կայքում տեղադրված տեղեկատվության համաձայն իրականացվել է՝ երկու նիստ 2016թ, երեք նիստ 2017թ:

Նիստերում քննարկվել են՝ խորհրդի 2016, 2017թթ գործողությունների պլանը, սփյուռքի հայության առկա վիճակի, «Իմ Հայաստան», «Մեր մեծերը», «Արցախի տարին», «Տեղեկատվական և ուսուցողական կայքերի մշակման և սպասարկման ծառայություններ», Հայ համայնքների կրթամշակութային խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերը, Համաշխարհային հայկական կոնգրեսի, Ռուսաստանի հայերի միության և ՀՀ սփյուռքի նախարարության հետ հայտարարված գիտական և ստեղծագործական լավագույն աշխատանքների համահայկական հերթական «Մրցանակաբաշխություն 2016», ՀՀ կառավարության 2017 թվականի «Սփյուռք» բաժնի գերակա խնդիրների և գործունեության միջոցառումների, Սփյուռքի հայկական կրթական հաստատություններին ուսումնական գրականության և օժանդակ նյութերի տրամադրման ու առաքման ծրագրի արդյունքները:

#### 15) ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն՝

ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության 12 ապրիլի 2016թ հրամանով հաստատվել է նախարարին կից հասարակական խորհրդի<sup>34</sup> աշխատակարգը և մայիսի 12-ին հաստատվել է խորհրդի կազմը: Համաձայն որի խորհրդի վերընտրությունները տեղի կունենան 2018թ մայիսին:

Խորհրդի կազմում ընդգրկված են 15 ՔՀԿ լիազոր ներկայացուցիչ, որոնցից մեկը ԼՂՀ փոխվարչապետի իրավախորհրդատուն: Համաձայն ՀՀ կառավարության 2015թ. նոյեմբերի 26-ի N 52 արձանագրային որոշմամբ հաստատված օրինակելի աշխատակարգի պետական պաշտոնյան կարող է հանդես գալ խորհրդում միայն հրավիրյալի կարգավիճակ, կամ որպես խորհրդի քարտուղար/համակարգող, նախարարի ներկայացուցիչ:

Խորհրդի ձևավորման պահից ներառյալ 2017թ. նոյեմբեր ամիսը իրականացվել է՝ 5 նիստ, երեքը 2016թ-ին, երկուսը 2017թ-ին:

Նիստերում քննարկվել են՝ ՀՀ 2016-2025թթ տարածքային զարգացման ռազմավարությունը, համայնքների խոշորացման իրականացված և նախատեսվող պիլոտային ծրագրերը, համայնքների խոշորացման ծրագրերի ընթացքի և Դիլիջան, Տաթև, Թումանյան համայնքների ներդրումային ծրագրերը, «Ֆինանսական համահարթեցման մասին», «Տեղական տուրքերի և վճարների մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքների նախագիծը, ՀՀ համայնքներում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառելիության առկա վիճակը և անելիքների հարցեր, մի շարք մեթոդական ձեռնարկներ, «Մաքուր Հայաստան» ծրագիրը:

Խորհրդի անդամ անհատ փորձագետ Վ. Պետրոսյանը մասնակցել է օրակարգի ձևավորմանը և հանդես եկել օրենքի նախագծի ներկայացմամբ:

#### 16) ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն

ՀՀ էկոնոմիկայի նախարարի 15 ապրիլի N 375-Ա հրամանով հաստատվել է նախարարին կից Հասարակական խորհրդի աշխատակարգը, **07 հունիսի 2016թ** N 550-Ա հրամանով հաստատվել է նախարարին կից հասարակական խորհրդի<sup>35</sup> կազմը: Նախարարության վերաձևավորման և ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության ձևավորման պատճառով խորհուրդը

<sup>34</sup> ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարին կից հասարակական խորհրդի պաշտոնական հասցեն <http://www.mtad.am/hy/ashkhatakarq/>

<sup>35</sup> ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարին կից հասարակական խորհրդի պաշտոնական հասցեն <http://www.mineconomy.am/hy/71>

2016թ-ին գործունեություն չի ծավալել: ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարը 02 փետրվարի 2017թ N 138-Ս հրամանով հաստատել է 15 ապրիլի 2016թ N 375 հրամանի փոփոխությունները, իսկ 02 մարտի 2017թ. N 171 հրամանով հաստատել է 07 հունիսի 2016թ N 550-Ս հրամանի փոփոխությունները: Համաձայն հիշյալ հրամանի խորհրդի վերընտրությունը տեղի կունենա 2019թ. մարտին:

Խորհրդի ձևավորման պահից ներառյալ 2017թ. նոյեմբեր ամիսը նիստ չի հրավիրվել:

Ի պատասխան «Արագ» ԲՀԿ-ի հարցման, նախարարության պաշտոնական գրությունից տեղեկացել ենք, որ խորհուրդն իր անդրանիկ նիստը գումարելու է 2017թ. դեկտեմբերին:

Խորհրդի անդամները հանդես չեն եկել նիստ հրավիրելու և օրակարգ ձևավորելու նախաձեռնությամբ:

#### **17) ՀՀ տրանսպորտի կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն՝**

